

**«Ապրանքների առուվաճառքի պայմանագրերի որոշ հայեցակետերի,  
2017/2394 (ԵՄ) կանոնակարգը եւ 2009/22/ԵՀ հրահանգը փոփոխելու եւ  
1999/44/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին»**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի 2019/771 (ԵՄ) ՀՐԱՀԱՆԳ  
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,  
հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը  
եւ մասնավորապես՝ դրա 114-րդ հոդվածը,  
հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացած առաջարկը,  
օրենսդրական ակտի նախագիծն ազգային խորհրդարաններ փոխանցելուց  
հետո,  
հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի  
եզրակացությունը<sup>1</sup>,  
գործելով ընդունված օրենսդրական ընթացակարգին համապատասխան<sup>2</sup>,  
քանի որ՝

- 1) Համաշխարհային շուկաներում մրցունակ մնալու համար Միությունը պետք է բարելավի ներքին շուկայի գործունեությունը եւ հաջողությամբ դիմագրավի բազմաթիվ մարտահրավերների, որոնք ներկայումս պայմանավորված են օրեցօր է՛լ ավելի տեխնոլոգիաիսեն տնտեսությամբ: Միասնական թվային շուկայի ռազմավարությունը սահմանում է համապարփակ շրջանակ՝

<sup>1</sup> ՊՏ C 264, 20.07.2016թ., էջ 57:

<sup>2</sup> Եվրոպական պառլամենտի 2019 թվականի մարտի 26-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս չհրապարակված) եւ Խորհրդի 2019 թվականի ապրիլի 15-ի որոշում:

ոյուրացնելով թվային ոլորտի ինտեգրումը ներքին շուկայում: Միասնական թվային շուկայի ռազմավարության առաջին փուլով լուծվում է ԵՄ-ի ներսում առևտրի մասնատվածության խնդիրը՝ դիտարկելով միջսահմանային էլեկտրոնային առևտրի զարգացման բոլոր հիմնական խոչընդոտները, որոնք կազմում են բիզնես-սպառող միջսահմանային վաճառքի ամենակարեւոր մասը:

- 2) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 26-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանվում է, որ Միությունը պետք է միջոցներ ձեռնարկի նպաստելու ներքին շուկայի ձեւավորմանը կամ գործունեությանը. այն ներքին սահմաններ չունեցող տարածք է, որտեղ ապահովվում են ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժը: «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 169-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ եւ 169-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետով նախատեսված է, որ Միությունն այդ պայմանագրի 114-րդ հոդվածին համապատասխան ներքին շուկայի ձեւավորման համատեքստում ձեռնարկված միջոցառումների օգնությամբ պետք է նպաստի սպառողների իրավունքների պաշտպանության բարձր մակարդակի ապահովմանը: Սույն Հրահանգի նպատակն է գտնել ճիշտ հավասարակշռություն սպառողի պաշտպանության բարձր մակարդակի ապահովման եւ ձեռնարկությունների մրցունակության միջեւ՝ միեւնույն ժամանակ ապահովելով սուբսիդիարության սկզբունքի պահպանումը:
- 3) Ապրանքների առուվաճառքի պայմանագրերի հետ կապված որոշ հայեցակետեր պետք է ներդաշնակեցվեն՝ որպես հիմք ընդունելով սպառողների պաշտպանության բարձր մակարդակը՝ իրական միասնական թվային շուկայի հասնելու, իրավական որոշակիության բարձրացման եւ գործարքների ծախսերը նվազեցնելու համար, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ների) մասով:

- 4) Էլեկտրոնային առևտուրը ներքին շուկայում աճի առանցքային շարժիչ ուժն է: Այնուամենայնիվ, դրա աճի ներուժն ամբողջովին չի օգտագործվում: Միության մրցունակությունն ամրապնդելու եւ աճը խթանելու համար Միությունը պետք է արագ գործի եւ խրախուսի տնտեսական ոլորտում գործունեություն իրականացնողներին՝ օգտագործելու ներքին շուկայի ողջ ներուժը: Ներքին շուկայի ողջ ներուժը կարող է բացահայտվել միայն այն դեպքում, երբ շուկայի բոլոր մասնակիցներն անխոչընդոտ հասանելիություն ունենան ապրանքների միջսահմանային վաճառքին, ներառյալ՝ էլեկտրոնային առևտրի գործարքներին: Պայմանագրային իրավունքի կանոնները, որոնց հիման վրա շուկայի մասնակիցները գործարքներ են կնքում, ապրանքների միջսահմանային վաճառք առաջարկելու վերաբերյալ գործարար որոշումների ձեւավորման հիմնական գործոններից են: Այդ կանոններն ազդում են նաեւ սպառողների՝ այս ճանապարհով կատարված գնումներից օգտվելու եւ դրանց վստահելու ցանկության վրա:
- 5) Տեխնոլոգիական զարգացումը հանգեցրել է շուկայում ապրանքների առուվաճառքի աճին, որոնք ներառում են կամ փոխկապակցված են թվային բովանդակության կամ թվային ծառայությունների հետ: Նման սարքերի քանակի եւ սպառողների կողմից դրանց օգտագործման արագ աճի պատճառով անհրաժեշտ է Միության մակարդակով գործողություններ ձեռնարկել՝ ապահովելու սպառողների պաշտպանության բարձր մակարդակը եւ բարձրացնելու այդպիսի ապրանքների առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառվող կանոնների իրավական որոշակիությունը: Իրավական որոշակիության բարձրացումը կօգնի ամրապնդել սպառողների եւ վաճառողների շրջանում վստահության ամրապնդմանը:
- 6) Միության ապրանքների առուվաճառքի նկատմամբ կիրառելի կանոնները դեռեւս միասնական չեն, թեեւ առաքման պայմանների եւ հեռակա ու տարածքից դուրս կնքված պայմանագրերի վերաբերյալ կանոնները,

պայմանագիր կնքելուց առաջ տեղեկություններին ներկայացվող պահանջները եւ պայմանագրերի կատարումից հրաժարվելու իրավունքը լիովին ներդաշնակեցված են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011/83/ԵՄ հրահանգով<sup>3</sup>: Այլ հիմնական պայմանագրային տարրեր, ինչպիսիք են համապատասխանության չափանիշները, պայմանագրին անհամապատասխանության դեպքերում իրավական պաշտպանության միջոցները եւ դրանց իրականացման հիմնական եղանակները, ներկայումս ենթակա են նվազագույն ներդաշնակեցման՝ համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999/44/ԵՀ հրահանգի<sup>4</sup>: Անդամ պետություններին թույլատրվել է գերազանցել Միության չափանիշները եւ ներդնել կամ ունենալ կանոններ, որոնք ապահովում են սպառողների պաշտպանության էլ ավելի բարձր մակարդակ: Այդպես վարվելիս նրանք կիրառել են տարբեր տարրեր եւ տարբեր ծավալներով: Այսպիսով, 1999/44/ԵՀ հրահանգին փոխարինող ազգային դրույթներն այսօր էականորեն տարբերվում են առանցքային տարրերի մասով, ինչպիսիք են իրավական պաշտպանության միջոցների աստիճանակարգությունը կամ դրա բացակայությունը:

- 7) Առկա տարբերությունները կարող են բացասաբար ազդել բիզնեսի եւ սպառողների վրա: Համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 593/2008 (ԵՀ) կանոնակարգի<sup>5</sup> ձեռնարկությունները, որոնց գործունեությունն ուղղված է այլ անդամ պետությունների սպառողներին, պարտավոր են հաշվի առնել սպառողի մշտական բնակության երկրում

<sup>3</sup> «Սպառողների իրավունքների մասին, Խորհրդի 93/13/ԵՏՀ հրահանգը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999/44/ԵՀ հրահանգը փոփոխելու եւ Խորհրդի 85/577/ԵՏՀ հրահանգն ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/7/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի 2011/83/ԵՄ հրահանգ (ՊՏ L 304, 22.11.2011թ., էջ 64):

<sup>4</sup> «Սպառողական ապրանքերի վաճառքի հետ կապված որոշակի հայեցակետերի եւ հարակից երաշխիքների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի մայիսի 25-ի 1999/44/ԵՀ հրահանգ (ՊՏ L 171, 7.7.1999թ., էջ 12):

<sup>5</sup> «Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ կիրառվող իրավունքի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի հունիսի 17-ի թիվ 593/2008 (ԵՀ) կանոնակարգ (Հոմ I) (ՊՏ L 177, 4.7.2008թ., էջ 6):

կիրառելի՝ սպառողներին վերաբերող պայմանագրային իրավունքի պարտադիր կանոնները: Քանի որ այդ կանոնները տարբերվում են ըստ անդամ պետությունների, ձեռնարկությունները կարող են կրել լրացուցիչ ծախսեր: Հետևաբար շատ ձեռնարկություններ կարող են նախընտրել շարունակելու առետուրը ներքին տարածքում կամ արտահանելու միայն մեկ կամ երկու անդամ պետություններ: Միջսահմանային առետուրի հետ կապված ծախսերի եւ ռիսկերի ազդեցությունը նվազագույնի հասցնելու այդպիսի ընտրությունը հանգեցնում է առետուրի եւ արտադրական ծավալների ընդլայնման հնարավորությունների կորստի: Սա հատկապես ազդում է ՓՄՁ-ների վրա:

- 8) Թեեւ արտերկրից արվող գնումների դեպքում թիվ 593/2008 (ԵՀ) կանոնակարգի կիրառման արդյունքում սպառողներն օգտվում են պաշտպանության բարձր մակարդակից, սակայն իրավական դաշտի անհամապատասխանությունը բացասաբար է անդրադառնում նաեւ միջսահմանային գործարքների նկատմամբ սպառողների վստահության մակարդակի վրա: Չնայած մի քանի գործոններ են նպաստում այս անվստահությանը, պայմանագրային հիմնական իրավունքների վերաբերյալ անորոշությունը կարելու տեղ է զբաղեցնում սպառողների շրջանում մտահոգությունների շարքում: Այս անորոշությունը գոյություն ունի անկախ այն հանգամանքից՝ արդյոք սպառողները պաշտպանված են իրենց անդամ պետության՝ սպառողների վերաբերյալ պայմանագրային իրավունքի պարտադիր կանոններով բոլոր այն դեպքերում, երբ վաճառողների միջսահմանային գործունեությունն ուղղված է իրենց, կամ անկախ այն հանգամանքից՝ արդյոք սպառողները վաճառողների հետ կնքում են միջսահմանային պայմանագրեր՝ առանց համապատասխան վաճառողի կողմից սպառողի անդամ պետությունում առետուրային գործունեություն ծավալելու:

- 9) Քանի որ ապրանքների առցանց վաճառքին բաժին է ընկնում Միությունում միջսահմանային վաճառքների մեծ մասը, պայմանագրերի վերաբերյալ ազգային օրենսդրությունների տարբերությունները հավասարապես ազդում են ինչպես հեռակա վաճառքի ուղիներն օգտագործող մանրածախ առևտուր իրականացնողի, այնպես էլ տեղում մանրածախ վաճառք իրականացնողների վրա եւ թույլ չեն տալիս նրանց ընդլայնվել սահմաններից դուրս: Սույն Հրահանգը ներառում է վաճառքի բոլոր ուղիները՝ սպառողներին ապրանքներ վաճառող բոլոր ձեռնարկությունների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով: Վաճառքի ուղիների մասով միասնական կանոններ սահմանելիս սույն Հրահանգը պետք է խուսափի ցանկացած տարածայնությունից, որը կարող է անհամաչափ բեռ ստեղծել Միությունում բազմաթիվ ուղիներով մանրածախ առևտուր իրականացնողների աճող թվի համար: Վաճառքի բոլոր ուղիների եւ երաշխիքների վերաբերյալ կանոնների հետետողական պահպանման անհրաժեշտությունը հաստատվել է 2017 թվականի մայիսի 29-ին հրապարակված սպառողների եւ շուկայավարման մասին օրենքի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից նպատակահարմարության ստուգման միջոցով. այս հարցին անդրադառնում է նաեւ 1999/44/ԵՀ հրահանգը:
- 10) Սույն Հրահանգը պետք է վերաբերի ապրանքների, այդ թվում՝ թվային տարրեր պարունակող ապրանքների վաճառքի նկատմամբ կիրառվող կանոններին միայն պայմանագրային հիմնական տարրերի մասով, որոնք անհրաժեշտ են ներքին շուկայում պայմանագրային իրավունքի հետ կապված խոչընդոտները հաղթահարելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ամբողջապես ներդաշնակեցնել ապրանքների համապատասխանության պահանջների վերաբերյալ կանոնները, ապրանքների՝ պայմանագրին չհամապատասխանելու դեպքում սպառողներին հասանելի իրավական պաշտպանության միջոցները եւ դրանց իրականացման հիմնական եղանակները, ինչպես նաեւ պետք է

ապահովվի սպառողների պաշտպանության ավելի բարձր մակարդակ՝ ի համեմատություն 1999/44/ԵՀ հրահանգի: Սպառողներին վերաբերող պայմանագրային իրավունքի որոշ առանցքային տարրերի ամբողջապես ներդաշնակեցված կանոնները դյուրին են դարձնում ձեռնարկությունների՝ հատկապես ՓՄՁ-ների կողմից իրենց արտադրանքն այլ անդամ պետություններում առաջարկելը: Ամբողջապես ներդաշնակեցնելով հիմնական կանոնները՝ սպառողները կունենան սպառողների պաշտպանության եւ բարեկեցության բարձր մակարդակ:

- 11) Սույն Հրահանգը լրացնում է 2011/83/ԵՄ հրահանգը: Մինչդեռ 2011/83/ԵՄ հրահանգը հիմնականում սահմանում է դրույթներ մինչեւ պայմանագիր կնքելը պահանջվող տեղեկությունների, հեռավար չեղարկման իրավունքի եւ տարածքից դուրս կնքված պայմանագրերի կանոնների, ինչպես նաեւ առաքման ու ռիսկի փոխանցման կանոնների վերաբերյալ, սույն Հրահանգով սահմանվում են ապրանքների համապատասխանության կանոնները, դրանց անհամապատասխանության դեպքում՝ իրավական պաշտպանության միջոցները եւ դրանց իրականացման հիմնական եղանակները:

Սույն Հրահանգը պետք է տարածվի միայն այն նյութական շարժական գույքի նկատմամբ, որը սույն Հրահանգի իմաստով ապրանք է համարվում: Հետեւաբար անդամ պետությունները պետք է ազատ լինեն այնպիսի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերը կարգավորելու հարցում, ինչպիսիք են բնակելի շենքերը եւ դրանց հիմնական բաղադրիչները, որոնք այդպիսի անշարժ գույքի կարելու մասն են:

- 13) Սույն Հրահանգը եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2019/770 (ԵՄ) հրահանգը<sup>6</sup> պետք է փոխլրացնեն միմյանց: Մինչ 2019/770 (ԵՄ) հրահանգով

<sup>6</sup> «Թվային բովանդակության եւ թվային ծառայությունների մատուցման պայմանագրերին վերաբերող որոշ հայեցակետերի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2019 թվականի մայիսի 20-ի 2019/770 (ԵՄ) հրահանգը (տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը):

կանոններ են սահմանվում թվային բովանդակության կամ թվային ծառայությունների մատուցման պայմանագրերի որոշակի պահանջների վերաբերյալ, սույն Հրահանգով կանոններ են սահմանվում ապրանքների առուվաճառքի պայմանագրերի որոշակի պահանջների վերաբերյալ: Համապատասխանաբար, սպառողների ակնկալիքները բավարարելու եւ թվային բովանդակության կամ թվային ծառայությունների առետորային գործունեություն իրականացնողների համար հստակ եւ պարզ իրավական դաշտ ապահովելու նպատակով 2019/770 (ԵՄ) հրահանգը կիրառվում է թվային բովանդակության կամ թվային ծառայությունների մատուցման նկատմամբ, ներառյալ՝ նյութական կրիչով թվային բովանդակության նկատմամբ, ինչպիսիք են թվային բազմանպատակ սկավառակները (DVDs), խտասկավառակները (CDs), USB կրիչները եւ հիշողության քարտերը, ինչպես նաեւ հենց նյութական կրիչի նկատմամբ՝ պայմանով, որ նյութական կրիչը ծառայի բացառապես որպես թվային բովանդակություն կրող: Ի հակադրություն սրա՝ սույն Հրահանգը պետք է կիրառվի ապրանքների, ներառյալ՝ թվային տարրեր պարունակող այնպիսի ապրանքների առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ, որոնց գործառույթների ապահովման համար պահանջվում է թվային բովանդակություն կամ թվային ծառայություն:

- 14) Սույն Հրահանգով սահմանված «ապրանքներ» տերմինը պետք է հասկացվի որպես «թվային տարրեր պարունակող ապրանքներ», եւ հետեւաբար այն պետք է վերաբերի նաեւ ցանկացած թվային բովանդակության կամ թվային ծառայության, որը ներառված կամ փոխկապակցված է այդպիսի ապրանքների հետ այնպես, որ այդ թվային բովանդակության կամ թվային ծառայության բացակայությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ ապրանքների նպատակային նշանակությամբ օգտագործման համար: Թվային բովանդակությունը, որը ներառված կամ փոխկապակցված է ապրանքի հետ, կարող է ներառել ցանկացած տվյալ, որը ստեղծվում եւ

մատուցվում է թվային ձևով, ինչպիսիք են օպերացիոն համակարգերը, հավելվածները եւ ցանկացած այլ ծրագրակազմ: Թվային բովանդակությունը կարող է նախապես տեղադրվել առուվաճառքի պայմանագրի կնքման պահին, կամ եթե դա նախատեսված է այդ պայմանագրով, կարող է տեղադրվել հետագայում: Թվային ծառայությունները, որոնք փոխկապակցված են ապրանքի հետ, կարող են ներառել ծառայություններ, որոնք թույլ են տալիս թվային եղանակով տվյալների ստեղծում, մշակում կամ պահպանում կամ դրանց հասանելիություն, օրինակ՝ ամպային հաշվողական միջավայրում առաջարկվող ծրագրակազմը որպես ծառայություն, տվյալների հոսքի շարունակական մատակարարումը նավիգացիոն համակարգում կամ խելացի ժամացույցի դեպքում անհատական հարմարեցված ուսումնական պլանների շարունակական մատակարարումը:

- 15) Սույն Հրահանգը պետք է կիրառվի ապրանքների, ներառյալ՝ թվային տարրեր պարունակող ապրանքների առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ, երբ ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության կամ թվային ծառայության բացակայությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ ապրանքների գործառութային կիրառման համար, եւ եթե այդ թվային բովանդակությունը կամ ծառայությունը տրամադրվում է այն ապրանքների հետ, որոնք նախատեսված են առուվաճառքի պայմանագրով: Այն հարցը, թե արդյոք ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցումը առուվաճառքի պայմանագրի մաս է կազմում, պետք է կախված լինի այդ պայմանագրի բովանդակությունից: Այն պետք է ներառի համախմբված կամ փոխկապակցված թվային բովանդակություն կամ թվային ծառայություններ, որոնց մատուցումը հստակորեն պահանջվում է պայմանագրով: Այն պետք է ներառի նաեւ առուվաճառքի պայմանագրերը, որոնք կարելի է ընկալել որպես հատուկ թվային բովանդակության կամ հատուկ թվային

ծառայության մատուցում ենթադրող պայմանագրեր, քանի որ դրանք սովորաբար կիրառվում են նույն տեսակի ապրանքների համար, եւ դրանց հետ կապված սպառողը կարող է ողջամիտ ակնկալիք ունենալ՝ հաշվի առնելով ապրանքների բնույթը եւ վաճառողի կողմից կամ նրա անունից կամ գործարքների շղթայի նախորդ օղակներում այլ անձանց, այդ թվում՝ արտադրողի կողմից արված հրապարակային հայտարարությունը: Եթե, օրինակ, խելացի հեռուստացույցը գովազդվում է որպես հատուկ տեսահավելված ունեցող ապրանք, ապա այդ տեսահավելվածը կհամարվի առուվաճառքի պայմանագրի մաս: Սա պետք է կիրառվի անկախ այն բանից, թե թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը նախապես տեղադրված է ապրանքի մեջ, թե այն պետք է հետագայում ներբեռնվի մեկ այլ սարքի վրա եւ ընդամենը փոխկապակցված է ապրանքի հետ: Օրինակ՝ խելացի հեռախոսը կարող է ունենալ առուվաճառքի պայմանագրով նախատեսված նախապես տեղադրված ստանդարտ հավելված, ինչպիսին է ազդանշանային հավելվածը կամ տեսախցիկի հավելվածը: Մեկ այլ հնարավոր օրինակ է խելացի ժամացույցը: Այս դեպքում ժամացույցն ինքնին կհամարվի թվային տարրեր պարունակող ապրանք, որն իր գործառույթները կարող է կատարել միայն առուվաճառքի պայմանագրով նախատեսված հավելվածով, որը սպառողը պետք է ներբեռնի խելացի հեռախոսի վրա՝ այդ դեպքում հավելվածը կդիտարկվի որպես փոխկապակցված թվային տարր: Սա պետք է կիրառվի նաեւ, եթե ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը չի մատուցվում հենց վաճառողի կողմից, այլ մատուցվում է առուվաճառքի պայմանագրով նշված երրորդ կողմի կողմից: Վաճառողների եւ սպառողների համար անորոշությունից խուսափելու նպատակով, այն դեպքում, երբ կասկած կա՝ արդյոք թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցումը առուվաճառքի պայմանագրի մաս է կազմում, պետք է կիրառվեն սույն Հրահանգի կանոնները: Բացի այդ, վաճառողի եւ սպառողի միջեւ երկկողմանի պայմանագրային հարաբերությունների վրա,

որի մաս է կազմում ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցումը, չպետք է ազդի զուտ այն փաստը, որ սպառողը պետք է համաձայնի երրորդ կողմի լիցենզավորման համաձայնագրի պայմաններին՝ թվային բովանդակությունից կամ թվային ծառայությունից օգտվելու համար:

- 16) Հակառակ դրան, եթե ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության կամ թվային ծառայության բացակայությունը խոչընդոտ չէ ապրանքի գործառույթի համար, կամ եթե սպառողը պայմանագիր է կնքում թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցման նպատակով, որը թվային տարրեր պարունակող ապրանքների առուվաճառքի պայմանագրի մաս չի կազմում, ապա այդ պայմանագիրը պետք է համարվի ապրանքի առուվաճառքի պայմանագրից առանձին, նույնիսկ եթե վաճառողն այդ երկրորդ պայմանագրի շրջանակներում երրորդ կողմ հանդիսացող մատակարարի համար միջնորդ է, եւ 2019/770 (ԵՄ) հրահանգի պայմաններին համապատասխանելու դեպքում այդ հարաբերությունները կարող են կարգավորվել նշված հրահանգով: Օրինակ, եթե սպառողը խելացի հեռախոսի մեջ է ներբեռնում խաղային հավելված, ապա խաղային հավելվածի մատուցման պայմանագիրը առանձին է հեռախոսի առուվաճառքի պայմանագրից: Հետեւաբար սույն Հրահանգը պետք է կիրառվի միայն խելացի հեռախոսի առուվաճառքի պայմանագրի դեպքում, մինչդեռ խաղային հավելվածի մատուցումը պետք է կարգավորվի 2019/770 (ԵՄ) հրահանգի շրջանակներում, եթե այդ հրահանգի պայմանները բավարարվում են: Մեկ այլ օրինակ է այն, երբ ուղղակիորեն համաձայնեցված է, որ սպառողը գնում է խելացի հեռախոս՝ առանց հատուկ օպերացիոն համակարգի, եւ սպառողը հետագայում պայմանագիր է կնքում երրորդ կողմի հետ՝ օպերացիոն համակարգի տրամադրման համար: Այդպիսի դեպքում առանձին գնված օպերացիոն համակարգի տրամադրումը չի կազմում առուվաճառքի պայմանագրի մաս, եւ հետեւաբար

դրա վրա չի տարածվում սույն Հրահանգի գործողությունը, սակայն այն կարող է կարգավորվել 2019/770 (ԵՄ) հրահանգով, եթե պահպանվում են այդ հրահանգի պայմանները:

17) Իրավական հստակության նպատակով սույն Հրահանգով պետք է սահմանվի «առուվաճառքի պայմանագիր» հասկացությունը, ինչպես նաև պետք է հստակ սահմանվի դրա գործողությունների շրջանակը: Սույն Հրահանգով պետք է կարգավորվեն նաև այնպիսի ապրանքների վերաբերյալ պայմանագրերը, որոնք ապագայում պետք է արտադրվեն կամ պատրաստվեն, այդ թվում՝ սպառողի մասնագրերին համապատասխան: Բացի այդ, ապրանքների տեղադրումը կարող է կարգավորվել սույն Հրահանգի շրջանակում, եթե տեղադրումը կազմում է առուվաճառքի պայմանագրի մաս է պետք է իրականացվի վաճառողի կողմից կամ վաճառողի պատասխանատվությամբ: Եթե պայմանագիրը ներառում է թե՛ ապրանքների առուվաճառքի, թե՛ ծառայությունների մատուցման տարրեր, ապա ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի, թե արդյոք սույն Հրահանգի իմաստով պայմանագիրն ամբողջությամբ կարող է դասակարգվել որպես առուվաճառքի պայմանագիր:

18) Սույն Հրահանգը չպետք է ազդի ազգային օրենսդրության վրա, եթե տվյալ խնդրի կարգավորումը դուրս է սույն Հրահանգի շրջանակներից, մասնավորապես՝ ապրանքների օրինականության, վնասների եւ պայմանագրային իրավունքի ընդհանուր հայեցակետերի մասով, ինչպիսիք են պայմանագրային հարաբերությունների առաջացումը, վավերականությունը, անվավերությունը կամ ուժի մեջ մտնելու հետեւանքները: Նույն մոտեցումը պետք է կիրառվի պայմանագիրը դադարելու հետեւանքների եւ վերսկսելու ու փոխարինման հետ կապված որոշ հայեցակետերի առնչությամբ, որոնք չեն կարգավորվում սույն Հրահանգով: Երբ կարգավորվում են կողմերի՝ իրենց պարտավորությունների կամ դրանց մի մասի կատարումից հրաժարվելու իրավունքը՝ պայմանավորված մյուս կողմի կողմից իր

պարտավորությունների կատարմամբ, անդամ պետությունները պետք է ազատ լինեն կարգավորելու սպառողի կողմից վճարում կատարելուց հրաժարվելու պայմաններն ու եղանակները: Անդամ պետությունները պետք է պահպանեն նաև վաճառողի կողմից սույն Հրահանգի խախտման հետեւանքով սպառողի կրած վնասի փոխհատուցմանն առնչվող գործողությունները կարգավորելու ազատությունը: Սույն Հրահանգը չպետք է ազդի նաև ազգային իրավունքի վրա, որը որոշակիորեն չի առնչվում սպառողական պայմանագրերին եւ սահմանում է իրավական պաշտպանության հստակ միջոցներ որոշ թերությունների դեպքում, որոնք ակնհայտ չեն եղել առուվաճառքի պայմանագրի կնքման պահին, մասնավորապես՝ ազգային օրենսդրության այնպիսի դրույթների վրա, որոնք կարող են սահմանել հատուկ կանոններ՝ թաքնված թերությունների համար վաճառողին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Սույն Հրահանգը չպետք է ազդի նաև ներպետական օրենքների վրա, որոնք սպառողի համար ապրանքների անհամապատասխանության դեպքում իրավական պաշտպանության միջոցներ են նախատեսում գործարքների շղթայի նախորդ օղակներում գտնվող անձանց, օրինակ՝ արտադրողների կամ նրանց պարտականությունները կատարող այլ անձանց նկատմամբ:

- 19) Սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների՝ սպառողներին որոշակի իրավական պաշտպանության միջոց ընտրելու հնարավորություն տալու ազատության վրա, եթե ապրանքի անհամապատասխանությունն ակնհայտ է դառնում առաքումից անմիջապես հետո, մասնավորապես՝ ազգային այն դրույթների վրա, որոնք նախատեսում են սպառողի կողմից թերություն ունեցող ապրանքները չընդունելու եւ պայմանագիրը չեղյալ հայտարարելու կամ ապրանքն անհապաղ փոխարինելու իրավունք ապրանքների առաքումից հետո որոշակի կարճ ժամանակահատվածում, որը չպետք է գերազանցի 30 օրը:

- 20) Անդամ պետությունները պետք է ազատ լինեն վաճառողի կողմից պայմանագրի կնքման նպատակով տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունը կարգավորելու հարցում կամ օրինակ, ապրանքի որոշակի բնութագրերի, սպառողի կողմից տրամադրվող նյութերի համապատասխանության կամ սպառողի հատուկ ցանկություններով պայմանավորված հնարավոր թերությունների, օրինակ՝ երեկոյան զգեստը պատրաստելու համար հատուկ գործվածք օգտագործելու սպառողի խնդրանքի հետ կապված վաճառողի կողմից սպառողին նախազգուշացնելու պարտավորությունները կարգավորելու հարցում:
- 21) Անդամ պետությունները պետք է նաեւ ազատ լինեն կիրառելու սույն Հրահանգով սահմանված կանոններն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք դուրս են սույն Հրահանգի գործողության շրջանակից, կամ այլ կերպ կարգավորեն այդպիսի պայմանագրերը: Օրինակ՝ անդամ պետությունները կարող են սպառողներին վերաբերող սույն Հրահանգի նորմերը կիրառել նաեւ սույն Հրահանգի իմաստով սպառող չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, սկսնակ ձեռնարկությունները կամ ՓՄՁ-ները:
- 22) «Սպառող» սահմանումը պետք է ներառի այն ֆիզիկական անձանց, որոնք գործում են իրենց առետրային գործունեության, ձեռնարկատիրության, արհեստի կամ մասնագիտության շրջանակներից դուրս: Այնուամենայնիվ, երկակի նշանակության պայմանագրերի դեպքում անդամ պետությունները պետք է նաեւ ազատ լինեն որոշելու, թե որ դեպքում է պայմանագիրը կնքվել անձի՝ մասամբ առետրային գործունեության շրջանակներում եւ մասամբ այդ գործունեության շրջանակներից դուրս, եւ որ դեպքում է առետրային գործունեության նպատակը սահմանափակված այն աստիճան, որ այն չի համարվում գերիշխող՝ պայմանագրի ամբողջ համատեքստում, եւ արդյոք այդ անձը նույնպես պետք է համարվի սպառող, եւ եթե այո, ապա որ դեպքերում:

- 23) Սույն Հրահանգը պետք է կիրառվի ցանկացած պայմանագրի նկատմամբ, որով վաճառողն ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է կամ պարտավորվում է փոխանցել սպառողին: Սույն Հրահանգի համաձայն հարթակներում ծառայություններ մատուցողները կարող են համարվել վաճառողներ, եթե նրանք գործունեություն են իրականացնում ձեռնարկատիրական նպատակներով եւ որպես սպառողի անմիջական պայմանագրային գործընկեր՝ ապրանքների առուվաճառքի մասով: Անդամ պետությունները պետք է ազատ լինեն կիրառելու սույն Հրահանգը հարթակների միջոցով ծառայություններ մատուցողների նկատմամբ, որոնք չեն բավարարում սույն Հրահանգի համաձայն վաճառող համարվելու պահանջները:
- 24) Իրավական որոշակիության անհրաժեշտությունն իրավական կանոնների անհրաժեշտ ճկունության հետ հավասարակշռելու համար սույն Հրահանգում արվող հղումն առ այն, թե ինչ կարելի է ակնկալել անձից կամ նրա կողմից, պետք է ընկալվի որպես հղում առ այն, թե ինչ է կարելի ողջամտորեն ակնկալել: Ողջամտության չափանիշը պետք է օբյեկտիվորեն ապահովվի՝ հաշվի առնելով պայմանագրի բնույթն ու նպատակը, հանգամանքները եւ ներգրավված կողմերի գործողությունն ու գործելակերպը:
- 25) Հստակություն ապահովելու համար, թե ինչ կարող է սպառողն ակնկալել ապրանքների հետ կապված, եւ թե ինչի համար պատասխանատվություն կկրի վաճառողը ակնկալվող ապրանքը չմատակարարելու դեպքում, կարելի է ամբողջությամբ ներդաշնակեցնել ապրանքների համապատասխանությունը սահմանելու վերաբերյալ կանոնները: Սույն Հրահանգում համապատասխանությանը վերաբերող ցանկացած հղում պետք է համարվի հղում առուվաճառքի պայմանագրով սահմանված դրույթներին ապրանքների համապատասխանությանը: Առուվաճառքի պայմանագրի երկու կողմերի օրինական շահերը պաշտպանելու համար համապատասխանությունը պետք է գնահատվի համապատասխանության եւ՝ սուբյեկտիվ, եւ՝ օբյեկտիվ պահանջների հիման վրա:

- 26) Հետեւաբար ապրանքը պետք է համապատասխանի առուվաճառքի պայմանագրով վաճառողի եւ սպառողի միջեւ համաձայնեցված պահանջներին: Նման պահանջները կարող են տարածվել, ի թիվս այլնի, ապրանքների քանակի, որակի, տեսակի եւ նկարագրության, դրանց՝ որոշակի նպատակներին համապատասխանության, ինչպես նաեւ ապրանքների մատակարարման նկատմամբ՝ համաձայնեցված լրացուցիչ պարագաներով եւ ցուցումներով: Առուվաճառքի պայմանագրով սահմանված պահանջները պետք է ներառեն այն պահանջները, որոնք բխում են նախքան պայմանագիր կնքելը տրամադրվող տեղեկություններից, որը, 2011/83/ԵՄ հրահանգի համաձայն, առուվաճառքի պայմանագրի անբաժանելի մասն է:
- 27) «Ֆունկցիոնալություն» հասկացությունը պետք է ընկալվի որպես եղանակ, որի միջոցով ապրանքները կարող են ապահովել իրենց գործառույթները՝ հաշվի առնելով դրանց նպատակային նշանակությունը: «Փոխգործակցելիություն» հասկացությունը վերաբերում է նրան, թե արդյոք եւ ինչքանով են կարող ապրանքները ֆունկցիոնալ լինել այնպիսի սարքակազմերի կամ ծրագրակազմերի հետ, որոնք տարբերվում են այն սարքակազմերից կամ ծրագրակազմերից, որոնց հետ սովորաբար օգտագործվում են նույն տեսակի ապրանքները: «Բարեհաջող ֆունկցիոնալություն» հասկացությունը կարող է ներառել, օրինակ, ապրանքների՝ սարքակազմի կամ ծրագրակազմի միջոցով տեղեկություններ փոխանակելու եւ փոխանակված տեղեկություններն օգտագործելու կարողությունը:
- 28) Հաշվի առնելով այն, որ թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունները, որոնք ներառված են ապրանքների մեջ կամ փոխկապակցված են դրանց հետ, շարունակաբար զարգանում են, վաճառողները կարող են համաձայնություն ձեռք բերել սպառողների հետ այդպիսի ապրանքների համար թարմացումներ տրամադրելու վերաբերյալ:

Թարմացումներն առուվաճառքի պայմանագրին համապատասխան կարող են բարելավել եւ բարձրացնել ապրանքների թվային բովանդակությունը կամ թվային ծառայության տարրը, ընդլայնել դրանց ֆունկցիոնալությունը, հարմարեցնել դրանք տեխնիկական զարգացումներին, պաշտպանել դրանք անվտանգային նոր սպառնալիքներից կամ ծառայել այլ նպատակների: Հետեւաբար ապրանքների համապատասխանությունը թվային բովանդակությանը կամ թվային ծառայություններին, որոնք ներառված են ապրանքների մեջ կամ փոխկապակցված են դրանց հետ, պետք է գնահատվի նաեւ այն տեսակետից, թե արդյոք այդ ապրանքների թվային բովանդակությունը կամ թվային ծառայության տարրը թարմացվել է առուվաճառքի պայմանագրին համապատասխան: Առուվաճառքի պայմանագրին համապատասխան թարմացումներ չապահովելը պետք է դիտարկվի որպես ապրանքի անհամապատասխանություն: Ավելին, խոտանված կամ թերի թարմացումները նույնպես պետք է դիտարկվեն որպես ապրանքների անհամապատասխանություն, եւ դա կնշանակի, որ այդպիսի թարմացումները չեն կատարվում առուվաճառքի պայմանագրով նախատեսված կարգով:

- 29) Համապատասխանող համարվելու նպատակով ապրանքները ոչ միայն պետք է համապատասխանեն համապատասխանության սուբյեկտիվ պահանջներին, այլ նաեւ պետք է համապատասխանեն սույն Հրահանգով սահմանված՝ համապատասխանության օբյեկտիվ պահանջներին: Համապատասխանությունը պետք է գնահատվի, ի թիվս այլնի, հաշվի առնելով նույնատեսակ ապրանքների՝ սովորաբար կիրառելի նպատակային նշանակությունը, արդյոք դրանք մատակարարվում են այն լրացուցիչ պարագաների եւ ցուցումների հետ միասին, որոնք սպառողը ստանալու ողջամիտ ակնկալիք կարող է ունենալ, կամ արդյոք դրանք համապատասխանում են վաճառողի՝ սպառողին նախապես տրամադրված նմուշին կամ մոդելին: Ապրանքները պետք է ունենան նաեւ նույնատեսակ

ապրանքներին բնորոշ որակական հատկանիշներ եւ բնութագրեր, որոնք սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել՝ հաշվի առնելով ապրանքի բնույթը եւ վաճառողի կամ գործարքների շղթայի նախորդ օղակներում այլ անձանց կողմից կամ նրանց անունից արված ցանկացած հրապարակային հայտարարություն:

- 30) Ի լրումն պայմանագրով համաձայնեցված թարմացումների՝ վաճառողը պետք է նաեւ տրամադրի թարմացումներ, ներառյալ՝ անվտանգային թարմացումները, որպեսզի ապահովի թվային տարրեր պարունակող ապրանքների համապատասխանությունը: Վաճառողի պարտավորությունը պետք է սահմանափակվի թարմացումներով, որոնք անհրաժեշտ են, որ այդպիսի ապրանքները պահպանեն իրենց համապատասխանությունը սույն Հրահանգով սահմանված համապատասխանության օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պահանջներին: Եթե կողմերը պայմանագրով այլ համաձայնություն ձեռք չեն բերել, վաճառողը չի պարտավորվում տրամադրել ապրանքների թվային բովանդակության կամ թվային ծառայության արդիականացված տարբերակները կամ բարելավել կամ ընդլայնել ապրանքների ֆունկցիոնալությունը համապատասխանության պահանջներից դուրս: Եթե առուվաճառքի պայմանագրով թվային բովանդակություն կամ թվային ծառայություն մատակարարող վաճառողի կամ երրորդ կողմի կողմից տրամադրված թարմացումն առաջացնում է ապրանքի անհամապատասխանություն թվային տարրերի հետ, ապա վաճառողը պետք է պատասխանատվություն կրի ապրանքը կրկին համապատասխանեցնելու համար: Սպառողը պետք է պահպանի տրամադրված թարմացումները տեղադրելու ընտրության ազատությունը: Եթե սպառողը որոշում է չտեղադրել թարմացումները, որոնք անհրաժեշտ են թվային տարրեր պարունակող ապրանքների համապատասխանությունը պահպանելու համար, ապա սպառողը չպետք է ակնկալի, որ այդպիսի ապրանքները կշարունակեն համարվել համապատասխանող: Վաճառողը

պետք է սպառողին տեղեկացնի, որ սպառողի որոշումը թարմացումները չտեղադրելու վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են թվային տարրեր պարունակող ապրանքների համապատասխանության ապահովման համար, ներառյալ՝ անվտանգային թարմացումները, կազդի վաճառողի՝ թվային տարրեր պարունակող այնպիսի ապրանքների հատկանիշների համապատասխանության մասով պատասխանատվության վրա, որոնց համապատասխանությունը պետք է ապահովվի թարմացումների արդյունքում: Սույն Հրահանգը չպետք է ազդի Միության այլ օրենքների կամ ազգային օրենսդրությանը համապատասխան անվտանգային թարմացումներ ապահովելու պարտավորությունների վրա:

- 31) Ըստ էության, թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում, երբ ապրանքների մեջ ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունն ապահովվում է մեկ մատակարարման միջոցով, վաճառողը պետք է պատասխանատվություն կրի միայն առաքման պահին գոյություն ունեցող անհամապատասխանության մասով: Այնուամենայնիվ, թարմացումներ տրամադրելու պարտավորությունը պետք է արտացոլի այն փաստը, որ այդպիսի ապրանքի թվային միջավայրը շարունակաբար փոփոխվում է: Հետեւաբար թարմացումներն անհրաժեշտ գործիք են՝ ապահովելու համար ապրանքների ֆունկցիոնալությունը նույն կերպ, ինչպես դա եղել է առաքման պահին: Ավելին, ի տարբերություն ավանդական ապրանքների, թվային տարրեր պարունակող ապրանքներն ամբողջովին առանձնացված չեն վաճառողի իրավասությունից, քանի որ վաճառողը կամ առուվաճառքի պայմանագրով թվային բովանդակություն կամ թվային ծառայություն մատուցող երրորդ կողմը կարող է հեռակա թարմացնել ապրանքները՝ սովորաբար համացանցի միջոցով: Հետեւաբար, եթե թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունն ապահովվում է մեկ մատակարարմամբ, վաճառողը պարտավոր է տրամադրել թարմացումներ,

որոնք անհրաժեշտ են թվային տարրեր պարունակող ապրանքների համապատասխանությունն ապահովելու համար այն ժամանակահատվածում, որը սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել, նույնիսկ եթե ապրանքը համարվում է համապատասխանող առաքման պահին: Այն ժամանակահատվածը, որի ընթացքում սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել թարմացումներ, պետք է սահմանվի՝ ելնելով ապրանքների տեսակից, նպատակային նշանակությունից եւ թվային տարրերից, ինչպես նաեւ հաշվի առնելով առուվաճառքի պայմանագրի հանգամանքներն ու բնույթը: Սպառողը սովորաբար ակնկալում է թարմացումներ ստանալ առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ վաճառողը պատասխանատու է անհամապատասխանության համար, մինչդեռ որոշ դեպքերում սպառողի ողջամիտ ակնկալիքը կարող է ներառել նշվածից ավելի երկար ժամկետ, ինչպես կարող է լինել հատկապես անվտանգային թարմացումների դեպքում: Այլ դեպքերում, օրինակ՝ թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում, որոնց նպատակային նշանակությունը ենթադրում է սահմանափակ ժամկետ, վաճառողի՝ թարմացումներ տրամադրելու պարտավորությունը որպես կանոն պետք է սահմանափակվի այդ ժամկետով:

- 32) Ապրանքների մշտակայունության ապահովումը կարելի է սպառման ավելի կայուն պրակտիկայի ձեւավորման եւ շրջանաձեւ տնտեսության հասնելու համար: Նույն կերպ, շուկայի նկատմամբ վերահսկողությունն ամրապնդելու եւ տնտեսավարողներին ճիշտ խթաններ տրամադրելու միջոցով չհամապատասխանող արտադրանքը Միության շուկայից դուրս թողնելը կարելի է նշանակություն ունի ներքին շուկայի գործունեության նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար: Այդ նպատակին հասնելու համար արտադրանքի հատուկ տեսակների կամ խմբերի համար մշտակայունության եւ արտադրանքի հետ կապված այլ պահանջների ներդրման առումով ապրանքների վերաբերյալ Միության օրենսդրությունն ամենահարմար

միջոցն է՝ այդ նպատակով օգտագործելով հարմարեցված չափանիշները: Հետեւաբար սույն Հրահանգը պետք է լրացնի այն նպատակները, որոնք դրված են Միության՝ արտադրանքի վերաբերյալ օրենսդրության հիմքում եւ պետք է ներառի մշտակայունությունը որպես ապրանքների համապատասխանության գնահատման օբյեկտիվ չափանիշ: Սույն Հրահանգի իմաստով մշտակայունությունը ասելով՝ պետք է հասկանալ բնականոն օգտագործման ընթացքում ապրանքների համար սահմանված գործառույթներն ու դրանց կատարումն ապահովելու ունակությունը: Որպեսզի ապրանքները համարվեն համապատասխանող, դրանք պետք է ունենան այնպիսի մշտակայունություն, որը հատկանշական է նույնատեսակ ապրանքների համար, եւ որը սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել՝ հաշվի առնելով կոնկրետ ապրանքների բնույթը, ներառյալ՝ ապրանքների ողջամիտ պահպանման հնարավոր անհրաժեշտությունը, ինչպիսիք են մեքենայում ֆիլտրերի կանոնավոր ստուգումը կամ փոխելը, ինչպես նաեւ հաշվի առնելով հրապարակային հայտարարությունը, որն արվում է գործարքների շղթայի մաս հանդիսացող որեւէ անձի կողմից կամ նրա անունից: Դա որոշելու համար պետք է նաեւ հաշվի առնել բոլոր այն համապատասխան հանգամանքները, ինչպիսիք են ապրանքների գինը եւ սպառողի կողմից ապրանքների օգտագործման ինտենսիվությունը կամ հաճախականությունը: Բացի այդ, եթե նախքան պայմանագիր ստորագրելն արված հայտարարության մեջ, որն առուվաճառքի պայմանագրի մաս է կազմում, նշվում են մշտակայունության վերաբերյալ հատուկ տեղեկություններ, ապա սպառողը պետք է կարողանա հիմնվել դրանց վրա որպես համապատասխանության սուբյեկտիվ պահանջների մաս:

- 33) Համաձայն սույն Հրահանգի՝ վաճառողը պետք է մատակարարի այնպիսի սպառողական ապրանքներ, որոնք համարվում են համապատասխանող առաքման պահին: Հնարավոր է, որ առաքման պահին առկա անհամապատասխանության դեպքում վաճառողներն օգտագործեն

պահեստամասեր ապրանքները վերանորոգելու իրենց պարտավորությունն իրականացնելու համար: Թեև սույն Հրահանգը չպետք է վաճառողներին պարտավորեցնի ապահովել պահեստամասերի հասանելիությունը որոշակի ժամանակահատվածում որպես համապատասխանության օբյեկտիվ պահանջ, այն չպետք է ազդի ազգային օրենսդրության այլ դրույթների վրա, որոնք պարտավորեցնում են վաճառողին, արտադրողին կամ գործարքների շղթայի մաս հանդիսացող այլ անձի ապահովել պահեստամասերի հասանելիությունը կամ սպառողներին տեղեկացնել այդպիսի հնարավորության մասին:

- 34) Մեծ քանակությամբ ապրանքներ պետք է տեղադրվեն նախքան սպառողի կողմից արդյունավետորեն օգտագործվելը: Բացի այդ, թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում թվային բովանդակության կամ թվային ծառայության տեղադրումը սովորաբար անհրաժեշտ է, որ սպառողը կարողանա դրանք օգտագործել ապրանքի նպատակային նշանակությանը համապատասխան: Հետևաբար ապրանքների սխալ տեղադրման, ներառյալ՝ ապրանքների մեջ ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության կամ թվային ծառայության սխալ տեղադրման հետեանքով առաջացած ցանկացած անհամապատասխանություն պետք է դիտարկվի որպես անհամապատասխանություն, եթե տեղադրումը կատարվել է վաճառողի կողմից կամ վերջինիս վերահսկողության ներքո: Եթե նախատեսվել է, որ ապրանքները պետք է տեղադրվեն սպառողի կողմից, ապա սխալ տեղադրման հետեանքով առաջացած անհամապատասխանությունը պետք է դիտարկվի որպես ապրանքի անհամապատասխանություն՝ անկախ նրանից՝ տեղադրումը կատարվել է սպառողի կողմից, թե նրա պատասխանատվության տակ գտնվող երրորդ կողմի կողմից, եթե սխալ տեղադրումը արդյունք է տեղադրման վերաբերյալ ցուցումների այնպիսի թերությունների, ինչպիսիք են ամբողջականության կամ հստակության բացակայությունը, ինչը տեղադրման ցուցումները սովորական սպառողի համար դժվար է դարձրել:

- 35) Համապատասխանությունը պետք է ներառի նյութական եւ իրավական թերությունները: Երրորդ կողմի իրավունքների, մասնավորապես՝ մտավոր սեփականության իրավունքի խախտման հետեւանքով առաջացած սահմանափակումները կարող են կանխել կամ սահմանափակել ապրանքների օգտագործումը պայմանագրի համաձայն: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այդպիսի դեպքերում սպառողն իրավասու լինի օգտվելու սույն Հրահանգով անհամապատասխանության համար սահմանված իրավական պաշտպանության միջոցներից, եթե ազգային օրենսդրությունն այդպիսի դեպքերում չի նախատեսում պայմանագրի անվավերություն կամ լուծում:
- 36) Կանոնների բավարար ճկունություն ապահովելու համար, օրինակ՝ օգտագործված ապրանքների առուվաճառքի հետ կապված, կողմերին պետք է հնարավորություն տրվի շեղվել սույն Հրահանգով նախատեսված համապատասխանության օբյեկտիվ պահանջներից: Այդպիսի շեղումը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, երբ սպառողը հատուկ տեղեկացված է եղել այդ մասին, եւ եթե սպառողը դա ընդունում է այլ հայտարարություններից կամ համաձայնություններից առանձին, ակտիվ գործողությունների եւ աներկիմաստ վարքագծի ձեւով:
- 37) Ինչպես սպառողների, այնպես էլ վաճառողների համար իրավական որոշակիության աստիճանի բարձրացումը պահանջում է ապրանքների համապատասխանության գնահատման ժամանակահատվածի հստակ սահմանում: Ապրանքների համապատասխանությունը սահմանելու համար համապատասխան ժամանակահատված պետք է դիտարկվի ապրանքների առաքման ժամանակը: Սա պետք է վերաբերի նաեւ այն ապրանքներին, որոնք ներառում են կամ փոխկապակցված են թվային բովանդակության կամ թվային ծառայության հետ, որն ապահովվում է մեկ մատակարարմամբ: Այնուամենայնիվ, եթե ապրանքների մեջ ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը պետք է

շարունակաբար մատակարարվի որոշակի ժամանակահատվածում, ապա այդ թվային բովանդակության կամ թվային ծառայության տարրի համապատասխանությունը սահմանելու համար չի կարող լինել համապատասխան ժամանակահատվածի կոնկրետ պահ, այլ պետք է լինի ժամանակահատված, որի սկիզբն է համարվում առաքման պահը: Իրավական որոշակիության նկատառումներից ելնելով՝ այդ ժամանակահատվածը պետք է համընկնի այն ժամանակահատվածի հետ, որի ընթացքում վաճառողը պատասխանատվություն է կրում անհամապատասխանության համար:

38) Սույն Հրահանգով չի կարող կարգավորվել «առաքում» սահմանումը, որը պետք է թողնվի ազգային օրենսդրությանը մասնավորապես այն հարցի մասով, թե ինչ պետք է անի վաճառողն ապրանքի առաքման հետ կապված իր պարտավորությունը կատարելու համար: Ավելին, սույն Հրահանգում առաքման ժամանակահատվածին արվող հղումները պետք է չհակասեն 2011/83/ԵՄ հրահանգով նախատեսված ռիսկի փոխանցման կանոններին եւ համապատասխանաբար կիրառվեն անդամ պետությունների իրավունքին համապատասխան:

39) Թվային տարրեր պարունակող ապրանքները պետք է համարվեն սպառողին մատակարարված այն դեպքում, երբ եւ՝ առաքվել է ապրանքի ֆիզիկական բաղադրիչը, եւ՝ ապահովվել է թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը մեկ մատակարարմամբ, կամ մեկնարկ է տրվել է թվային բովանդակության կամ թվային ծառայության շարունակական մատակարարմանը որոշակի ժամանակահատվածում: Սա նշանակում է, որ վաճառողը պետք է սպառողի համար ապահովի հասանելիություն նաեւ թվային բովանդակությանը կամ թվային ծառայությանն այնպես, որ թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը կամ այն ներբեռնելու կամ դրանում մուտք գործելու համար համապատասխան միջոցը հասանելի լինի սպառողին, եւ վաճառողի կողմից որեւէ այլ գործողություն չպահանջվի,

որպեսզի սպառողը հնարավորություն ունենա օգտագործել թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը պայմանագրին համապատասխան, օրինակ՝ տրամադրելով հղում կամ ներբեռնման տարբերակ: Հետեւաբար համապատասխանությունը սահմանելու համապատասխան պահը պետք է լինի թվային բովանդակության կամ թվային ծառայության մատակարարման պահը, եթե ֆիզիկական բաղադրիչն ավելի վաղ է մատակարարվել:

Արդյունքում, հնարավոր է ապահովել, որ պարտավորությունների կատարման ժամանակահատվածի միասնական սկզբնաժամկետ սահմանվի մի կողմից՝ ֆիզիկական բաղադրիչի համար, իսկ մյուս կողմից՝ թվային տարրի համար: Ավելին, շատ դեպքերում սպառողն ի վիճակի չէ նկատել ֆիզիկական բաղադրիչի թերությունը նախքան թվային բովանդակության կամ թվային ծառայության տրամադրումը:

- 40) Այն դեպքում, երբ ապրանքները պետք է տեղադրվեն վաճառողի կողմից, սպառողը որոշակի դեպքերում չի կարող օգտագործել ապրանքը կամ նկատել դրա թերությունը նախքան տեղադրման ավարտը: Հետեւաբար եթե առուվաճառքի պայմանագրով ապրանքները պետք է տեղադրվեն վաճառողի կողմից կամ վաճառողի պատասխանատվությամբ, ապա տեղադրման ավարտից հետո միայն կարելի է համարել, որ ապրանքն առաքվել է սպառողին:
- 41) Վաճառողների համար իրավական որոշակիության եւ միջսահմանային գնումների նկատմամբ սպառողների ընդհանուր վստահության ապահովման համար անհրաժեշտ է նախատեսել ժամկետ, որի ընթացքում անհամապատասխանության դեպքում սպառողն իրավասու կլինի օգտվելու իրավական պաշտպանության միջոցներից համապատասխանության սահմանման համապատասխան ժամկետում: Հաշվի առնելով, որ 1999/44/ԵՀ հրահանգը կիրառելիս անդամ պետությունների մեծամասնության կողմից սահմանվել է երկու տարվա ժամկետ, եւ

գործնականում այդ ժամկետը շուկայի մասնակիցների կողմից ողջամիտ է համարվել, պետք է պահպանել այդ ժամկետը: Նույն ժամկետը պետք է կիրառվի թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում: Այնուամենայնիվ, եթե պայմանագրով նախատեսվում է երկու տարին գերազանցող շարունակական մատակարարում, ապա սպառողն իրավասու կլինի օգտվելու իրավական պաշտպանության միջոցներից թվային բովանդակության կամ թվային ծառայության անհամապատասխանության դեպքում, որը տեղի է ունենում կամ ակնհայտ է դառնում պայմանագրին համապատասխան թվային բովանդակություն կամ թվային ծառայություն մատակարարելու ժամանակահատվածում: Իրենց ազգային իրավունքում սպառողների պաշտպանության մակարդակը բարձրացնելու հարցում անդամ պետությունների համար ճկունություն ապահովելու նպատակով անդամ պետությունները պետք է ազատ լինեն նախատեսելու վաճառողի պատասխանատվության ավելի երկար ժամկետներ, քան նախատեսված է սույն Հրահանգով:

- 42) Գոյություն ունեցող ազգային իրավական համակարգերի համապատասխանության նպատակներից ելնելով՝ անդամ պետությունները պետք է ազատ լինեն կա՛մ վաճառողների համար նախատեսելու պարտավորություն այնպիսի անհամապատասխանության դեպքում, որն ակնհայտ է դառնում որոշակի ժամանակահատվածում, որը, հնարավոր է, համընկնում է անհամապատասխանության ժամկետի հետ, կամ էլ պարզապես նախատեսելու ժամկետներ սպառողների իրավական պաշտպանության միջոցների կիրառման համար: Առաջին դեպքում անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վաճառողի պարտավորությունների կատարման ժամկետին չխանգարի սպառողների իրավունքների պաշտպանության միջոցների համար սահմանված վերջնաժամկետը: Թեև սույն Հրահանգով չպետք է ներդաշնակեցվեն ազգային օրենսդրությամբ սահմանված սկզբնաժամկետները, սակայն այն պետք է ապահովի, որ

այդպիսի ժամկետները չսահմանափակեն սպառողների՝ այնպիսի անհամապատասխանության դեպքում պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքը, որն ակնհայտ է դառնում այն ժամանակահատվածում, որի ընթացքում վաճառողը պարտավորություն է կրում անհամապատասխանության համար: Վերջին դեպքում անդամ պետությունները պետք է կարողանան պահպանել կամ սահմանել վերջնաժամկետներ միայն սպառողների իրավունքների պաշտպանության միջոցների կիրառման համար՝ առանց սահմանելու որոշակի ժամանակահատված, որի ընթացքում պետք է ակնհայտ դառնա անհամապատասխանությունը, որի համար վաճառողը պատասխանատվություն պետք է կրի: Այդպիսի դեպքերում սպառողների հավասար պաշտպանության նպատակով անդամ պետությունները պետք է ապահովեն, որ բոլոր այն դեպքերում, երբ կիրառվում են վերջնաժամկետներ, պառողները, այնուամենայնիվ, պետք է կարողանան օգտվել իրավական պաշտպանության միջոցներից անհամապատասխանության դեպքում, որն ակնհայտ է դառնում առնվազն սույն Հրահանգով նախատեսված ժամկետում՝ որպես պարտավորությունների կատարման ժամկետ:

- 43) Ինչ վերաբերում է որոշ հայեցակետերի, օգտագործված ապրանքների դեպքում տարբերվող մոտեցումը կարող է արդարացված լինել: Չնայած երկու եւ ավելի տարի ժամանակահատված ընդգրկող պարտավորությունների կատարման ժամկետը կամ վերջնաժամկետները սովորաբար համատեղում են եւ՝ վաճառողի, եւ՝ սպառողի շահերը, նույնը հնարավոր չէ ասել օգտագործված ապրանքների դեպքում: Հետեւաբար այդպիսի ապրանքների դեպքում անդամ պետություններին պետք է հնարավորություն տրվի կողմերին թույլ տալ պայմանավորվելու սահմանել պարտավորությունների կատարման ավելի կարճ ժամկետներ կամ վերջնաժամկետներ: Այս հարցը կողմերի միջեւ պայմանագրի

շրջանակներում համաձայնեցնելուն թողնելն ավելի լայն պայմանագրային ազատություն է ընձեռում եւ երաշխավորում է սպառողի տեղեկացվածությունը թե՛ ապրանքի բնույթի՝ որպես օգտագործված ապրանքի, թե՛ պարտավորությունների կատարման ավելի կարճ ժամկետի կամ վերջնաժամկետի վերաբերյալ: Այնուամենայնիվ, պայմանագրով համաձայնեցված այդպիսի ժամկետը չպետք է լինի մեկ տարուց պակաս:

44) Սույն Հրահանգը չի կարգավորում այն դեպքերը, երբ սույն Հրահանգով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետը կամ վերջնաժամկետը կասեցվում կամ ընդհատվում է: Հետեւաբար անդամ պետությունները պետք է կարողանան նախատեսել պարտավորությունների կատարման ժամկետի կամ վերջնաժամկետի կասեցում կամ ընդհատում, օրինակ՝ վերանորոգման, փոխարինման կամ վաճառողի եւ սպառողի միջեւ բանակցությունների դեպքում՝ խաղաղ կարգավորման նպատակով:

45) Եթե մեկ կամ երկու տարվա ընթացքում անդամ պետությունները որոշեն կիրառել երկու տարվա ժամկետ, սպառողը պետք է միայն ապացուցի, որ ապրանքը չհամապատասխանող է՝ առանց միեւնույն ժամանակ ապացուցելու, որ անհամապատասխանությունն առկա է եղել համապատասխանությունը սահմանելու համապատասխան պահին: Սպառողի պնդումը հերքելու համար վաճառողը պետք է ապացուցի, որ այդ պահին չի եղել անհամապատասխանություն: Բացի այդ, որոշ դեպքերում այն ենթադրությունը, որ անհամապատասխանություն է եղել համապատասխանությունը սահմանելու համապատասխան պահին, կարող է անհամատեղելի լինել ապրանքի կամ անհամապատասխանության բնույթի հետ: Առաջինը կարող է լինել այն ապրանքների դեպքում, որոնք իրենց բնույթով կարող են կորցնել ապրանքային տեսքը, ինչպիսիք են շուտ փչացող ապրանքները, օրինակ՝ ծաղիկները կամ ապրանքները, որոնք նախատեսված են միայն մեկանգամյա օգտագործման համար: Երկրորդ դեպքում որպես օրինակ կարելի է բերել անհամապատասխանությունը, որը

կարող է առաջանալ միայն սպառողի գործողության կամ ակնհայտորեն արտաքին գործոնների հետեւանքով, որը տեղի է ունեցել ապրանքը սպառողին առաքելուց հետո: Թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում, եթե պայմանագիրը նախատեսում է թվային բովանդակության կամ թվային ծառայության շարունակական մատուցում, ապա սպառողը չպետք է ապացուցի, որ թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունն անհամապատասխան է եղել համապատասխանությունը սահմանելու համապատասխան պահին: Սպառողի պնդումը հերքելու համար վաճառողը պետք է ապացուցի, որ թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը տվյալ ժամանակահատվածում համապատասխան է եղել:

- 46) Անդամ պետություններին պետք է թույլատրվի ունենալ կամ նախատեսել դրույթներ, համաձայն որոնց սպառողն իր իրավունքներից օգտվելու համար պետք է անհամապատասխանության մասին վաճառողին տեղեկացնի անհամապատասխանությունը հայտնաբերելուց հետո երկու ամսվա ընթացքում: Անդամ պետություններին պետք է թույլատրվի ապահովել սպառողների պաշտպանության ավելի բարձր մակարդակ՝ առանց նման պարտավորություն սահմանելու:
- 47) Իրավական որոշակիության ավելի բարձր մակարդակ ապահովելու եւ ներքին շուկայի համար խոչընդոտներ ստեղծող հիմնական խնդիրներից մեկը վերացնելու համար սույն Հրահանգով պետք է ամբողջությամբ ներդաշնակեցվեն ապրանքների անհամապատասխանության դեպքում սպառողների համար իրավական պաշտպանության հասանելի միջոցները եւ պայմանները, որոնց դեպքում կարող են կիրառվել այդպիսի միջոցները: Մասնավորապես, անհամապատասխանության դեպքում սպառողները պետք է ունենան ապրանքը համապատասխանեցնելու կամ գնի համարժեք իջեցման կամ էլ պայմանագիրը դադարեցնելու իրավունք:

- 48) Ինչ վերաբերում է ապրանքները համապատասխանեցնելուն, ապա սպառողները պետք է օգտվեն վերանորոգման կամ փոխարինման միջեւ ընտրություն ունենալու հնարավորությունից: Սպառողներին վերանորոգում պահանջելու հնարավորություն տալը կխրախուսի կայուն սպառումը եւ կարող է նպաստել արտադրանքի մշտակայունությանը: Սպառողի ընտրությունը վերանորոգման եւ փոխարինման միջեւ պետք է սահմանափակվի միայն այն դեպքում, երբ ընտրված տարբերակն իրավական առումով կամ փաստացի անհնարին կլինի իրականացնել կամ վաճառողի համար անհամաչափ ծախսեր կառաջացնի՝ ի համեմատություն մյուս տարբերակի հետ: Օրինակ՝ անհամաչափ կարող է դիտարկվել ապրանքի փոխարինման պահանջ ներկայացնելն աննշան քերծվածքի դեպքում, երբ այդպիսի փոխարինումը զգալի ծախսեր կառաջացնի, մինչդեռ քերծվածքը կարող է հեշտությամբ վերացվել վերանորոգման արդյունքում:
- 49) Վաճառողին պետք է թույլ տալ հրաժարվելու ապրանքը համապատասխանեցնելուց, եթե եւ՛ վերանորոգումը, եւ՛ փոխարինումն անհնար են, կամ եթե դրանք անհամաչափ ծախսեր կառաջացնեն վաճառողի համար: Նույնը պետք է կիրառվի, եթե վերանորոգումը կամ փոխարինումն անհնար է, իսկ այլընտրանքային միջոցն անհամաչափ ծախսեր կառաջացնի վաճառողի համար: Օրինակ, եթե ապրանքները գտնվում են մի վայրում, որը տարբերվում է այն վայրից, որտեղից դրանք ի սկզբանե առաքվել են, ապա փոստային առաքման եւ փոխադրման ծախսերը կարող են անհամաչափ մեծ լինել վաճառողի համար:
- 50) Եթե անհամապատասխանությունն ակնհայտ է դառնում, սպառողը պետք է այդ մասին տեղեկացնի վաճառողին, որ վաճառողին հնարավորություն տա ապահովելու ապրանքի համապատասխանությունը: Վաճառողը դա պետք է անի ողջամիտ ժամկետում: Հետեւաբար սպառողը սկզբունքորեն չպետք է անմիջապես գինն իջեցնելու կամ պայմանագիրը դադարեցնելու իրավասություն ունենա, այլ պետք է վաճառողին ողջամիտ ժամանակ

տրամադրի՝ չհամապատասխանող ապրանքը վերանորոգելու կամ փոխարինելու համար: Եթե այդ ժամկետում վաճառողը չի վերանորոգում կամ փոխարինում ապրանքը, ապա սպառողը պետք է իրավունք ունենա պահանջելու եւ ստանալու գնի իջեցում կամ պայմանագրի դադարեցում՝ առանց լրացուցիչ հետաձգումների:

51) Եթե վերանորոգման կամ փոխարինման արդյունքում սպառողը չի օգտվում անհամապատասխանության դեպքում նախատեսված իրավական պաշտպանության համապատասխան միջոցներից, ապա սպառողը պետք է գինն իջեցնելու կամ պայմանագիրը դադարեցնելու իրավունք ունենա: Դա պետք է լինի մասնավորապես այն դեպքում, երբ վաճառողը չի ավարտել վերանորոգումը կամ փոխարինումը, կամ երբ հանգամանքներից պարզ է դառնում, որ վաճառողը չի ավարտի վերանորոգումը կամ փոխարինումը, կամ վաճառողը հրաժարվել է ապրանքի համապատասխանությունն ապահովելուց, քանի որ վերանորոգումը եւ փոխարինումն անհնարին են, կամ դրանք անհամաչափ ծախսեր կառաջացնեն վաճառողի համար:

52) Որոշ իրավիճակներում սպառողի կողմից գինն իջեցնելու կամ պայմանագիրն անհապաղ դադարեցնելու իրավունքը կարող է հիմնավորված լինել: Եթե վաճառողը միջոցներ է ձեռնարկել ապահովելու ապրանքի համապատասխանությունը, սակայն հետագայում ակնհայտ է դառնում անհամապատասխանությունը, ապա պետք է օբյեկտիվորեն որոշվի, թե արդյոք սպառողը պետք է ընդունի ապրանքի համապատասխանությունն ապահովելուն ուղղված վաճառողի հետագա փորձերը՝ հաշվի առնելով տվյալ դեպքի հետ կապված բոլոր հանգամանքները, ինչպիսիք են ապրանքների տեսակը եւ արժեքը, ինչպես նաեւ անհամապատասխանության բնույթն ու նշանակությունը: Մասնավորապես թանկարժեք կամ բաղադրատարր ապրանքների դեպքում կարող է արդարացված լինել վաճառողին անհամապատասխանությունը վերացնելու եւ մեկ հնարավորություն տալը: Պետք է նաեւ հաշվի առնել, թե

արդյոք սպառողից կարելի է ակնկալել վստահության առկայություն վաճառողի՝ ապրանքի համապատասխանությունն ապահովելու կարողության նկատմամբ, օրինակ՝ նույն խնդիրը կրկին առաջանալու պատճառով: Նույն կերպ, որոշակի իրավիճակներում անհամապատասխանությունը կարող է այնքան լուրջ բնույթ կրել, որ սպառողը չի կարող վստահություն ունենալ վաճառողի՝ ապրանքի համապատասխանությունն ապահովելու կարողության նկատմամբ, օրինակ՝ եթե անհամապատասխանությունը խիստ ազդում է սպառողի՝ ապրանքները բնականոն կերպով օգտագործելու կարողության վրա, եւ հնարավոր չէ սպառողից ակնկալել վստահություն առ այն, որ վաճառողի կողմից ապրանքը վերանորոգելը կամ փոխարինելը կլուծի խնդիրը:

- 53) Պայմանավորվող կողմերի իրավունքների եւ պարտականությունների միջեւ հավասարակշռություն պահպանելու նպատակով սպառողը պետք է օգտվի պայմանագիրը դադարեցնելու իրավունքից միայն այն դեպքերում, երբ անհամապատասխանությունն աննշան չէ:
- 54) Անդամ պետությունները պետք է կարողանան կարգավորել այն իրավիճակները, երբ պարտապանի պարտականությունները կարող են իրականացվել մեկ այլ անձի կողմից, օրինակ՝ այն իրավիճակները, երբ ապրանքը վերանորոգելու վաճառողի պարտականությունը կարող է իրականացվել սպառողի կամ երրորդ անձի կողմից՝ վաճառողի հաշվին:
- 55) Սպառողներին ուշացման ռիսկից պաշտպանելու նպատակով վերանորոգումը կամ փոխարինումը պետք է բարեհաջող ավարտվի ողջամիտ ժամկետում: Վերանորոգման կամ փոխարինման համար ողջամիտ ժամկետը պետք է համապատասխանի վերանորոգումը կամ փոխարինումն ավարտին հասցնելու ամենակարճ ժամկետին: Այդ ժամկետը պետք է օբյեկտիվորեն որոշվի՝ հաշվի առնելով ապրանքների բնույթն ու բաղադրատարր լինելը, անհամապատասխանության բնույթն ու լրջությունը, ինչպես նաեւ վերանորոգումը կամ փոխարինումն ավարտին հասցնելու

- համար անհրաժեշտ ջանքերը: Սույն Հրահանգն իրականացնելիս անդամ պետությունները պետք է կարողանան մեկնաբանել «վերանորոգումը կամ փոխարինումն ավարտին հասցնելու ողջամիտ ժամկետ» հասկացությունը՝ նախատեսելով սահմանված ժամկետներ, որոնք ընդհանուր առմամբ կարող են ողջամիտ համարվել վերանորոգման կամ փոխարինման համար, մասնավորապես՝ ապրանքների որոշակի կատեգորիաների մասով:
- 56) Սույն Հրահանգով չեն սահմանվում դրույթներ այն մասին, թե որտեղ պետք է կատարվեն պարտապանի պարտավորությունները: Հետեւաբար սույն Հրահանգում չի նշվում առաքման վայրը, եւ չի սահմանվում, թե որտեղ պետք է տեղի ունենա վերանորոգումը կամ փոխարինումը. այդպիսի հարցերը պետք է թողնել ազգային օրենսդրությանը:
- 57) Եթե վաճառողն ապահովում է ապրանքի համապատասխանությունը փոխարինման միջոցով, ապա սպառողը չպետք է վճարի նախքան ապրանքները փոխարինելը դրանց բնականոն օգտագործման համար: Ապրանքի օգտագործումը համարվում է բնականոն, եթե այն համապատասխանում է ապրանքի բնույթին եւ նպատակային նշանակությամբ:
- 58) Սպառողների համար պայմանագիրը դադարեցնելու իրավունքն արդյունավետ դարձնելու նպատակով այն իրավիճակներում, երբ սպառողը ձեռք է բերում մի քանի ապրանքներ եւ չհամապատասխանող է լինում միայն պայմանագրով մատակարարված ապրանքների մի մասը, ապա սպառողը պետք է իրավունք ունենա դադարեցնելու պայմանագիրը նաեւ մյուս ապրանքների մասով, որոնք ձեռք են բերվել չհամապատասխանող ապրանքների հետ միասին, նույնիսկ եթե այդ մյուս ապրանքները համապատասխանող են, եթե սպառողից ողջամտորեն չի կարող ակնկալվել, որ նա կընդունի միայն համապատասխանող ապրանքները:
- 59) Եթե սպառողը դադարեցնում է պայմանագիրն անհամապատասխանության պատճառով, սույն Հրահանգով պետք է սահմանվեն կանոններ միայն

դադարեցման իրավունքի հիմնական հետեւանքների եւ ձեւերի վերաբերյալ, մասնավորապես՝ կողմերի՝ իրենց ստացածը վերադարձնելու պարտավորության մասին: Այսպիսով, վաճառողը պետք է պարտավորվի վերադարձնել սպառողից ստացած գումարը, իսկ սպառողը պետք է վերադարձնի ապրանքը:

60) Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների՝ պայմանագիրը դադարեցնելու դեպքում դրա հետեւանքները կարգավորելու ազատության վրա՝ բացառությամբ այն կարգավորումների, որոնք սահմանված են սույն Հրահանգով, ինչպես օրինակ՝ ապրանքների արժեքի նվազման, դրանց ոչնչացման կամ կորստի հետեւանքները: Անդամ պետություններին պետք է թույլատրվի նաեւ կարգավորել սպառողներին արժեքը փոխհատուցելու եղանակները, օրինակ՝ այդպիսի փոխհատուցման համար օգտագործվող միջոցների կամ փոխհատուցման հետեւանքով առաջացած հնարավոր ծախսերի եւ վճարների իրականացման եղանակները: Անդամ պետությունները, օրինակ, պետք է նաեւ արժեքի փոխհատուցման կամ ապրանքների վերադարձի ժամկետներ սահմանելու ազատություն ունենան:

61) Վնասի հատուցման համար վաճառողի պատասխանատվության սկզբունքը առուվաճառքի պայմանագրերի կարելու տարրն է: Սպառողները, հետեւաբար, վաճառողից փոխհատուցում պահանջելու իրավունք պետք է ունենան սույն Հրահանգի խախտման հետեւանքով առաջացած վնասի համար, այդ թվում՝ անհամապատասխանության հետեւանքով կրած վնասի համար: Այդպիսի փոխհատուցման արդյունքում սպառողը պետք է առավելագույնս մոտ լինի այն իրավիճակին, որում սպառողը կլիներ ապրանքի համապատասխանության դեպքում: Քանի որ վնասների հատուցման իրավունքն արդեն իսկ նախատեսված է բոլոր անդամ պետություններում, սույն Հրահանգը չպետք է սահմանափակի սպառողների՝ այդ կանոնների խախտման հետեւանքով առաջացած վնասի փոխհատուցման վերաբերյալ ազգային կանոնները: Անդամ պետությունները

պետք է նաեւ ազատ լինեն կարգավորելու սպառողների՝ փոխհատուցման իրավունքի հարցերն այն իրավիճակներում, երբ վերանորոգումը կամ փոխարինումը զգալի անհարմարություններ է պատճառել, կամ այն հետաձգվել է:

- 62) Թափանցիկություն ապահովելու նպատակով առետրային երաշխիքներին առնչվող որոշակի պահանջները պետք է ներկայացվեն 2011/83/ԵՄ հրահանգով սահմանված՝ առետրային երաշխիքների առկայության եւ պայմանների վերաբերյալ նախքան պայմանագիր կնքելը տեղեկություններ տրամադրելու պահանջներին զուգահեռ: Ավելին, իրավական որոշակիություն ապահովելու եւ սպառողներին մոլորեցնելուց խուսափելու նպատակով սույն Հրահանգով պետք է նախատեսվի, որ եթե համապատասխան գովազդներում ներկայացվող առետրային երաշխիքով սպառողի համար ավելի բարենպաստ պայմաններ են սահմանվում, քան դա նախատեսված է երաշխիքների վերաբերյալ հայտարարությամբ, ապա գերակայում են առավել շահավետ պայմանները: Ի վերջո, սույն Հրահանգը պետք է նախատեսի երաշխիքների վերաբերյալ հայտարարության բովանդակության եւ սպառողներին այն հասանելի դարձնելու մասին կանոններ: Օրինակ՝ երաշխիքների վերաբերյալ հայտարարությունը պետք է ներառի առետրային երաշխիքի պայմանները եւ սահմանի, որ համապատասխանության իրավական երաշխիքը չի ազդում առետրային երաշխիքի վրա՝ հստակեցնելով, որ առետրային երաշխիքի պայմանները պարտավորություն են, որը լրացնում է համապատասխանության իրավական երաշխիքը: Անդամ պետությունները պետք է պահպանեն առետրային երաշխիքների այլ հայեցակետերի վերաբերյալ կանոններ սահմանելու ազատությունը, որոնք չեն կարգավորվում սույն Հրահանգով, օրինակ՝ երաշխավորից բացի այլ պարտապաններին առետրային երաշխիքի մասով ընդգրկելու մասին կանոնները՝ պայմանով, որ այդ կանոնները սպառողներին չեն զրկում առետրային երաշխիքների

վերաբերյալ սույն Հրահանգի ամբողջովին ներդաշնակեցված դրույթներով իրենց տրամադրված պաշտպանությունից: Թեև անդամ պետությունները պետք է պահպանեն առևտրային երաշխիքներն անվճար տրամադրելու ազատությունը, նրանք պետք է ապահովեն, որ վաճառողի կամ արտադրողի պարտավորությունը, որը համապատասխանում է սույն Հրահանգով սահմանված առևտրային երաշխիքների սահմանմանը, պետք է համապատասխանի սույն Հրահանգի ներդաշնակեցված կանոններին:

- 63) Հաշվի առնելով, որ վաճառողը պատասխանատվություն է կրում սպառողի առջև ապրանքի ցանկացած անհամապատասխանության համար, որը բխում է վաճառողի կամ երրորդ կողմի գործողությունից կամ անգործությունից, վաճառողը գործարքների շղթայի նախորդ օղակներում պատասխանատու անձի մասով պետք է հնարավորություն ունենա օգտվելու իրավական միջոցներից: Այդպիսի միջոցները պետք է ներառեն անհամապատասխանության դեպքում կիրառվող իրավական պաշտպանության միջոցները, որոնք առաջանում են թարմացումներ տրամադրելու հետ կապված անգործությունից, ներառյալ՝ անվտանգային թարմացումը, որն անհրաժեշտ է թվային տարրեր պարունակող ապրանքի համապատասխանությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, սույն Հրահանգը չպետք է ազդի վաճառողի եւ գործարքների շղթայի մյուս կողմերի միջև պայմանագրի ազատության սկզբունքի վրա: Այդ իրավունքի իրացման վերաբերյալ դրույթները, մասնավորապես՝ թե ում նկատմամբ եւ ինչպես պետք է կիրառվեն պաշտպանության այդ միջոցները, եւ արդյոք դրանք պարտադիր բնույթ են կրում, պետք է սահմանվեն անդամ պետությունների կողմից: Գործարքների շղթայի նախորդ օղակներում գտնվող կողմի դեմ սպառողի կողմից ուղղակի պահանջ ներկայացնելու հարցը չպետք է կարգավորվի սույն Հրահանգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրողը սպառողին առաջարկում է ապրանքների առևտրային երաշխիք:

- 64) Ազգային օրենսդրության համաձայն սպառողի պայմանագրային իրավունքների պաշտպանության հարցում օրինական շահ ունեցող անձանց կամ կազմակերպություններին պետք է հնարավորություն տրվի բողոք ներկայացնել դատարան կամ վարչական մարմին, որը բողոքների մասով որոշումներ կայացնելու կամ համապատասխան վարույթ նախաձեռնելու իրավասություն ունի:
- 65) Սույն Հրահանգի որեւէ դրույթ չպետք է հակասի միջազգային մասնավոր իրավունքի կանոնների, մասնավորապես՝ թիվ 593/2008 (ԵՀ) կանոնակարգի եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1215/2012 (ԵՄ) կանոնակարգի կիրառմանը<sup>7</sup>:
- 66) 1999/44/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի: Ուժը կորցրած ճանաչելու ամսաթիվը պետք է համապատասխանեցվի սույն Հրահանգով պայմանավորված՝ օրենսդրության համապատասխանեցման ամսաթվին: Ապահովելու համար անդամ պետությունների՝ սույն Հրահանգի հետ համապատասխանեցված օրենքների, կանոնակարգերի եւ վարչական դրույթների միատեսակ կիրառումն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են օրենսդրության համապատասխանեցման ամսաթվից հետո, սույն Հրահանգը չպետք է կիրառվի այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են նախքան օրենսդրության համապատասխանեցման ամսաթիվը:
- 67) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի<sup>8</sup> 2017/2394 (ԵՄ) կանոնակարգի հավելվածը պետք է փոփոխվի եւ ներառի հղում սույն Հրահանգին՝ դրա կիրարկման հարցում միջսահմանային համագործակցությունը դյուրացնելու նպատակով:

<sup>7</sup> «Քաղաքացիական եւ առևտրային հարցերով գործերի նկատմամբ իրավասության եւ վճիռների ճանաչման եւ կիրարկման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1215/2012 (ԵՄ) կանոնակարգ (ՊՏ L 351, 20.12.2012թ., էջ 1):

<sup>8</sup> «Սպառողների պաշտպանության մասին օրենքների կիրարկման համար պատասխանատու ազգային մարմինների միջեւ համագործակցության եւ թիվ 2006/2004 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի 2017/2394 (ԵՄ) կանոնակարգ (ՊՏ L 345, 27.12.2017թ., էջ 1):

- 68) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի<sup>9</sup> 22/2394/ԵՀ կանոնակարգի հավելվածը պետք է փոփոխվի եւ ներառի հղում սույն Հրահանգին՝ դրա կիրարկման հարցում միջսահմանային համագործակցությունը դյուրացնելու նպատակով:
- 69) Բացատրական փաստաթղթերի<sup>10</sup> վերաբերյալ անդամ պետությունների եւ Հանձնաժողովի՝ 2011 թվականի սեպտեմբերի 28-ի Համատեղ քաղաքական հռչակագրի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել անհրաժեշտության դեպքում իրենց կողմից իրականացվող օրենսդրության համապատասխանեցման միջոցառումների վերաբերյալ ծանուցմանը կից ներկայացնելու հրահանգի բաղադրիչների եւ օրենսդրության համապատասխանեցման նպատակով ազգային գործիքների համապատասխան մասերի միջեւ կապը բացատրող մեկ կամ մի քանի փաստաթուղթ: Սույն Հրահանգի նպատակներով օրենսդիրն այդ փաստաթղթերի փոխանցումը հիմնավորված է համարում:
- 70) Քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ներքին շուկայի գործունեությանը նպաստելը՝ հետեւողական կերպով հաղթահարելով Միության տարածքում ապրանքների միջսահմանային վաճառքի վերաբերյալ պայմանագրային իրավունքին առնչվող խոչընդոտները, չի կարող բավարար կերպով իրագործվել անդամ պետության կողմից այն պատճառով, որ յուրաքանչյուր անդամ պետություն ի վիճակի չէ առանձին լուծելու գոյություն ունեցող իրավական դաշտի որոշակի խնդիրները՝ ապահովելով իր իրավունքի համապատասխանությունն այլ անդամ պետությունների օրենքների հետ, փոխարենն այդ նպատակին ավելի լավ կարելի է հասնել Միության մակարդակով՝ լիակատար ներդաշնակեցման ճանապարհով վերացնելով պայմանագրային իրավունքին առնչվող

<sup>9</sup> «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցների կիրառման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/22/ԵՀ հրահանգ (ՊՏ L 110, 1.5.2009թ., էջ 30):

<sup>10</sup> ՊՏ C 369, 17.12.2011թ., էջ 14:

խոչընդոտները, Միությունը կարող է միջոցներ ձեռնարկել Եվրոպական Միության մասին պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգով այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում տեղի չի ունենում:

71) Հանձնաժողովի համար նպատակահարմար է վերանայել սույն Հրահանգի կիրառումն այն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո, ներառյալ՝ մասնավորապես իրավունքի պաշտպանության միջոցներին վերաբերող դրույթները, ապացուցման բեռը, այդ թվում՝ օգտագործված ապրանքների եւ հրապարակային աճուրդներում վաճառվող ապրանքների մասով, ինչպես նաեւ մշտակայունության վերաբերյալ արտադրողի առեւտրային երաշխիքը: Հանձնաժողովը պետք է նաեւ գնահատի, թե արդյոք սույն Հրահանգի եւ 2019/770 (ԵՄ) հրահանգի կիրառումն ապահովում է հետետողական եւ համահունչ իրավական դաշտ՝ կապված թվային բովանդակության կամ թվային ծառայությունների մատուցման եւ թվային տարրեր պարունակող ապրանքների մատակարարման հետ:

72) Սույն Հրահանգով պահպանվում են հիմնարար իրավունքներն ու ազատությունները, եւ այն առաջնորդվում է մասնավորապես Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայով ճանաչված սկզբունքներով,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Կարգավորման առարկան եւ նպատակը**

Սույն Հրահանգի նպատակն է նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը՝ միաժամանակ ապահովելով սպառողների պաշտպանության բարձր մակարդակ՝ սահմանելով ընդհանուր կանոններ վաճառողների եւ սպառողների միջեւ կնքված առուվաճառքի պայմանագրերի մասով որոշակի պահանջների վերաբերյալ, մասնավորապես՝ պայմանագրի պայմաններին ապրանքների համապատասխանության վերաբերյալ կանոններ, անհամապատասխանության դեպքում՝ իրավական պաշտպանության միջոցներ, այդ միջոցների կիրառման եղանակներ եւ առետրային երաշխիքներ:

### *Հոդված 2*

#### **Սահմանումները**

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «առուվաճառքի պայմանագիր» նշանակում է պայմանագիր, համաձայն որի վաճառողը փոխանցում կամ պարտավորվում է սպառողին փոխանցել ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ սպառողը վճարում կամ պարտավորվում է վճարել դրանց արժեքը
- 2) «սպառող» նշանակում է ֆիզիկական անձ, որը սույն Հրահանգով կարգավորվող պայմանագրերին համապատասխան գործում է այդ անձի առետրային գործունեության, ձեռնարկատիրության, արհեստի կամ մասնագիտության շրջանակներից դուրս

- 3) «վաճառող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ անկախ դրա մասնավոր կամ պետական սեփականություն լինելու փաստից, որը գործում է այդ թվում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունից կամ վերջինիս կողմից հանդես եկող որեւէ այլ անձի միջոցով սույն Հրահանգով կարգավորվող պայմանագրերի մասով՝ այդ անձի առետրային, ձեռնարկատիրական գործունեությանը, արհեստին կամ մասնագիտական գործունեությանն առնչվող նպատակներով
- 4) «արտադրող» նշանակում է ապրանքներ արտադրող, Միության տարածք ապրանքներ ներմուծող կամ այնպիսի անձ, որն այդպիսի նպատակ է հետապնդում՝ իր անունը, առետրային նշանը կամ այլ տարբերանշան ապրանքի վրա տեղադրելու միջոցով
- 5) «ապրանքներ» նշանակում է՝
- ա) նյութական շարժական գույք սույն Հրահանգի իմաստով ջուրը, գազը եւ էլեկտրաէներգիան համարվում են ապրանքներ, եթե դրանք վաճառքի են դրված սահմանափակ ծավալով կամ սահմանված քանակով,
  - բ) նյութական շարժական գույքը, որը ներառում է կամ փոխկապակցված է թվային բովանդակության կամ թվային ծառայության հետ այնպես, որ այդ թվային բովանդակության կամ թվային ծառայության բացակայությունը խոչընդոտում է ապրանքների գործառույթները կատարելուն («թվային տարրեր պարունակող ապրանքներ»)
- 6) «թվային բովանդակություն» նշանակում է թվային տեսքով ձեւավորված եւ տրամադրված տվյալներ
- 7) «թվային ծառայություն» նշանակում է՝
- ա) ծառայություն, որը թույլ է տալիս սպառողին ստեղծել, մշակել, պահել կամ հասանելիություն ունենալ տվյալներին թվային ձեւով, կամ

- բ) ծառայություն, որը թույլ է տալիս կիսվել կամ փոխազդել թվային ձեռով արտահայտված տվյալների հետ, որոնք վերբեռնվել կամ ստեղծվել են այդ ծառայության սպառողի կամ այլ օգտագործողների կողմից
- 8) «համատեղելիություն» նշանակում է ապրանքների՝ սարքակազմի եւ ծրագրակազմի հետ աշխատելու կարողությունը, որոնց հետ սովորաբար օգտագործվում են նույնատեսակ ապրանքներ՝ առանց ապրանքների, սարքակազմի կամ ծրագրակազմի փոխակերպման անհրաժեշտության,
- 9) «ֆունկցիոնալություն» նշանակում է ապրանքների՝ դրանց նպատակին համահունչ գործառույթներ իրականացնելու կարողությունը"
- 10) «փոխգործակցելիություն» նշանակում է ապրանքների այնպիսի սարքակազմի եւ ծրագրակազմի հետ աշխատելու կարողություն, որոնք տարբերվում են այն սարքակազմերից եւ ծրագրակազմերից, որոնց հետ սովորաբար օգտագործվում են նույնատեսակ ապրանքները"
- 11) «հուսալի կրիչ» նշանակում է գործիք, որը սպառողին կամ վաճառողին հնարավորություն է տալիս հետագա հղումների համար մատչելի ձեռով պահելու անձամբ իրեն հասցեագրված տեղեկատվությունը տեղեկատվության նպատակներին համապատասխան ժամկետում, եւ որը հնարավոր է դարձնում պահված տեղեկատվության անփոփոխ վերարտադրումը"
- 12) «առեւտրային երաշխիք» նշանակում է վաճառողի կամ արտադրողի (երաշխավորի) կողմից սպառողի նկատմամբ ստանձնած պարտավորություն, ի լրումն համապատասխանության երաշխիքի հետ կապված վաճառողի իրավական պարտավորությանը փոխհատուցում տրամադրելու վճարված արժեքի դիմաց կամ փոխարինելու, վերանորոգելու կամ ցանկացած եղանակով սպասարկելու ապրանքները, եթե դրանք չեն համապատասխանում մասնագրերին կամ համապատասխանությանը չառնչվող այլ պահանջների, որոնք շարադրված են երաշխիքների

- վերաբերյալ հայտարարությունում կամ պայմանագրի կնքման պահին կամ դրանից առաջ հասանելի են եղել համապատասխան գովազդային նյութում
- 13) «մշտակայունություն» նշանակում է ապրանքների՝ պահանջվող գործառույթներն ու բնականոն օգտագործման միջոցով դրանց կիրառումը պահպանելու կարողություն.
- 14) «անվճար» նշանակում է ապրանքի համապատասխանությունն ապահովելու համար կատարված անհրաժեշտ ծախսերից, մասնավորապես՝ փոստային առաքման, փոխադրման, աշխատանքի կամ նյութերի ծախսերից զերծ լինելը.
- 15) «հրապարակային աճուրդ» նշանակում է վաճառքի մեթոդ, որտեղ վաճառողի կողմից ապրանքներ կամ ծառայություններ են առաջարկվում այն սպառողներին, որոնք մասնակցում են կամ որոնց հնարավորություն է տրվել մասնակցելու աճուրդին անձամբ՝ աճուրդի կազմակերպչի կողմից իրականացվող թափանցիկ, հայտերի ներկայացման մրցակցային ընթացակարգի միջոցով, եւ որի ժամանակ հաղթող ճանաչված մասնակիցն ի վերջո գնում է ապրանքները կամ ծառայությունները:

### Հոդված 3

#### **Գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգը կիրառվում է սպառողի եւ վաճառողի միջեւ կնքվող առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ:
2. Սպառողի եւ վաճառողի միջեւ կնքվող՝ արտադրման կամ պատրաստման ենթակա ապրանքների մատակարարման պայմանագրերը սույն Հրահանգի իմաստով նույնպես համարվում են առուվաճառքի պայմանագրեր:
3. Սույն Հրահանգը չի կիրառվում թվային բովանդակության կամ թվային ծառայությունների մատուցման պայմանագրերի նկատմամբ:

Այնուամենայնիվ, այն կիրառվում է թվային բովանդակության կամ թվային ծառայությունների նկատմամբ, որոնք ներառված կամ փոխկապակցված են ապրանքների հետ 2-րդ հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետի իմաստով եւ ապրանքների հետ տրամադրվում են առուվաճառքի պայմանագրով՝ անկախ նրանից, թե այդպիսի թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը մատուցվում է վաճառողի կամ երրորդ կողմի կողմից: Եթե կասկած է առաջանում այն հարցի շուրջ, թե արդյոք ներառված կամ փոխկապակցված թվային բովանդակության մատակարարումը կամ ներառված կամ փոխկապակցված թվային ծառայությունն առուվաճառքի պայմանագրի մաս է, ենթադրվում է, որ թվային բովանդակությունը կամ թվային ծառայությունը կարգավորվում է առուվաճառքի պայմանագրով:

4. Սույն Հրահանգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ.

- ա) նյութական կրիչի նկատմամբ, որը ծառայում է բացառապես որպես թվային բովանդակության կրող, կամ
- բ) այն ապրանքների նկատմամբ, որոնք վաճառվել են կատարողական գործընթացի կամ օրենքով այլ կերպ սահմանված կարգով:

5. Անդամ պետությունները կարող են սույն Հրահանգի գործողության ոլորտից հանել՝

- ա) հրապարակային աճուրդով վաճառվող օգտագործված ապրանքների առուվաճառքի պայմանագրերը, եւ
- բ) կենդանի կենդանիների Առուվաճառքի պայմանագրերը:

Սպառողների համար «ա» կետում նշված դեպքերում պետք է ապահովվի անխոչընդոտ հասանելիություն հստակ եւ համապարփակ տեղեկությունների առ այն, որ սույն Հրահանգից բխող իրավունքները չեն կիրառվում:

6. Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների՝ ընդհանուր պայմանագրային իրավունքի որոշ հայեցակետերը կարգավորելու

ազատության վրա, ինչպիսիք են պայմանագրային հարաբերությունների առաջացման, վավերականության, անվավերության կամ ուժի մեջ մտնելու հետեւանքների մասին կանոնները, ներառյալ՝ պայմանագիրը դադարեցնելու հետեւանքներն այնքանով, որքանով դրանք չեն կարգավորվում սույն Հրահանգով կամ վնասների հատուցման իրավունքով:

7. Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների ազատության վրա՝ թույլատրելու սպառողներին ընտրել իրավական պաշտպանության որոշակի միջոց, եթե ապրանքների անհամապատասխանությունն ակնհայտ է դառնում առաքումից հետո՝ 30 օրը չգերազանցող ժամկետում: Բացի այդ, սույն Հրահանգը չի ազդում սպառողական պայմանագրերին բնորոշ այնպիսի ազգային կանոնների վրա, որոնցով նախատեսվում են իրավական պաշտպանության առանձնահատուկ միջոցներ որոշակի թերությունների վերացման համար, որոնք ակնհայտ չեն եղել առուվաճառքի պայմանագրի կնքման պահին:

#### *Հոդված 4*

### **Ներդաշնակեցման մակարդակը**

Անդամ պետություններն իրենց ազգային օրենսդրության մեջ չպետք է ունենան կամ չպետք է սահմանեն սույն Հրահանգում շարադրված դրույթներից տարբերվող, այդ թվում՝ ավելի կամ պակաս խիստ դրույթներ՝ սպառողների իրավունքների պաշտպանության այլ մակարդակ ապահովելու համար, եթե սույն Հրահանգով այլ բան նախատեսված չէ:

### Հոդված 5

#### **Ապրանքների համապատասխանությունը**

Վաճառողը պետք է անհրաժեշտության դեպքում սպառողին մատակարարի ապրանքներ, որոնք համապատասխանում են 6-րդ, 7-րդ եւ 8-րդ հոդվածներով սահմանված պահանջներին՝ չհակասելով 9-րդ հոդվածին:

### Հոդված 6

#### **Համապատասխանության սուբյեկտիվ պահանջները**

Առուվաճառքի պայմանագրով համապատասխանություն ապահովելու համար ապրանքները մասնավորապես կիրառելիության դեպքում պետք է՝

- ա) համապատասխան են առուվաճառքի պայմանագրով սահմանված նկարագրությանը, տեսակին, քանակին ու որակին եւ օժտված լինեն առուվաճառքի պայմանագրով սահմանված ֆունկցիոնալությամբ, փոխգործակցելիությամբ եւ այլ հատկանիշներով,
- բ) պիտանի լինեն օգտագործման համար այն կոնկրետ նշանակությամբ, որի համար դրանք անհրաժեշտ են սպառողին, եւ որի մասին նա հայտնել է վաճառողին պայմանագիրը կնքելու պահին, եւ ինչը վաճառողն ընդունել է,
- գ) առաքված լինեն առուվաճառքի պայմանագրով սահմանված բոլոր լրացուցիչ պարագաներով եւ ցուցումներով, այդ թվում՝ տեղադրման վերաբերյալ, եւ
- դ) մատակարարվի թարմացումներով, ինչպես սահմանված է առուվաճառքի պայմանագրով:

## Հոդված 7

### Համապատասխանության օբյեկտիվ պահանջները

1. Բացի համապատասխանության սուբյեկտիվ պահանջին համապատասխանելուց՝ ապրանքները պետք է՝
  - ա) համապատասխանեն այն նպատակային նշանակությանը, որոնց համար սովորաբար օգտագործվում են նույնատեսակ ապրանքները՝ հաշվի առնելով, ըստ անհրաժեշտության, գործող Միության եւ ազգային օրենսդրությունը, տեխնիկական ստանդարտները կամ այդպիսի տեխնիկական ստանդարտների բացակայության դեպքում՝ սվյալ ոլորտին ներհատուկ կանոնները,
  - բ) կիրառելիության դեպքում լինեն որակյալ եւ համապատասխանեն նմուշի կամ մոդելի նկարագրությանը, որը վաճառողը հասանելի է դարձրել սպառողին մինչեւ պայմանագիր կնքելը,
  - գ) կիրառելիության դեպքում մատակարարվեն այնպիսի լրացուցիչ պարագաների հետ միասին, ներառյալ՝ փաթեթավորումը, տեղադրման ցուցումները կամ այլ հրահանգներ, որոնք սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել ստանալ, եւ
  - դ) ինն են այն քանակով եւ ունենան այնպիսի որակ եւ այլ հատկանիշներ, ներառյալ՝ մշտակայունությունը, ֆունկցիոնալությունը, համատեղելիությունը եւ անվտանգությունը, որոնք բնորոշ են նույնատեսակ ապրանքներին, եւ որոնք սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել՝ հաշվի առնելով ապրանքների բնույթը եւ հրապարակային հայտարարությունը, որն արվել է վաճառողի կամ գործարքների շղթայի նախորդ օղակներում այլ անձանց, այդ թվում՝ արտադրողի կողմից կամ անունից՝ մասնավորապես գովազդում կամ պիտակավորման ձեւով:

2. Վաճառողը պատասխանատվություն չի կրում հրապարակային հայտարարությունների համար, ինչպես նշված է 1-ին պարբերության «դ» կետում, եթե վաճառողն ապացուցում է, որ՝
- ա) ինքը տեղյակ չէր եւ ողջամտորեն չէր կարող տեղյակ լինել խնդրո առարկա հրապարակային հայտարարության մասին,
  - բ) մինչեւ պայմանագիրը կնքելու պահը հրապարակային հայտարարությունը ուղղվել է նույն կամ համանման ձեռով, ինչ ձեռով այն արվել է, կամ
  - գ) ապրանքը ձեռք բերելու մասին որոշումը չէր կարող պայմանավորված լինել այդ հրապարակային հայտարարությամբ:
3. Թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում վաճառողը պետք է ապահովի, որ սպառողն իրազեկված լինի, եւ ապրանքը սպառողին մատակարարվի թարմացումներով, այդ թվում՝ անվտանգային թարմացումներով, որոնք անհրաժեշտ են այդ ապրանքների համապատասխանությունն ապահովելու համար այն ժամանակի ընթացքում՝
- ա) որը սպառողը կարող է ողջամտորեն ակնկալել՝ հաշվի առնելով ապրանքների եւ թվային տարրերի տեսակն ու նպատակային նշանակությունը, պայմանագրի հանգամանքներն ու բնույթը, եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսվում է թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցում մեկ մատակարարմամբ, կամ
  - բ) որը սահմանվում է 10-րդ հոդվածի 2-րդ կամ 5-րդ պարբերություններում՝ ըստ կիրառելիության, համաձայն որի առուվաճառքի պայմանագրով սահմանվում է թվային բովանդակության կամ թվային ծառայության շարունակական մատուցում որոշակի ժամանակահատվածի ընթացքում:

4. Եթե սպառողը ողջամիտ ժամկետում չի տեղադրում 3-րդ պարբերության համաձայն տրամադրված թարմացումները, վաճառողը պատասխանատվություն չի կրում բացառապես տվյալ թարմացման բացակայության հետեւանքով առաջացած անհամապատասխանության համար՝ պայմանով, որ՝
- ա) վաճառողը սպառողին տեղեկացրել է թարմացման առկայության եւ սպառողի կողմից այն չտեղադրելու հետեւանքների մասին, եւ
  - բ) սպառողի կողմից չտեղադրելը կամ սխալ տեղադրելը պայմանավորված չէ սպառողին տրամադրված տեղադրման ցուցումների թերություններով:
5. 1-ին կամ 3-րդ պարբերության իմաստով, անհամապատասխանություն չի կարող դիտվել այն դեպքը, երբ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահին սպառողը հատուկ տեղեկացված է եղել, որ առկա է ապրանքի որոշակի հատկանիշի շեղում 1-ին կամ 3-րդ պարբերությամբ սահմանված համապատասխանության օբյեկտիվ պահանջներից, եւ սպառողն ուղղակիորեն եւ հատուկ ընդունել է այդ շեղումն առուվաճառքի պայմանագիրը կնքելիս:

### Հոդված 8

#### **Ապրանքների սխալ տեղադրումը**

Ապրանքների սխալ տեղադրման հետեւանքով առաջացած անհամապատասխանություն համարվում է ապրանքի անհամապատասխանությունը, եթե՝

- ա) տեղադրումն առուվաճառքի պայմանագրի մաս է կազմում եւ իրականացվել է վաճառողի կողմից կամ վաճառողի պատասխանատվությամբ, կամ

- բ) սպառողի կողմից կատարման ենթակա տեղադրումն արվել է սպառողի կողմից, եւ սխալ տեղադրումը պայմանավորված է եղել վաճառողի կողմից տրամադրված տեղադրման ցուցումների թերություններով կամ թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում տրամադրված է եղել վաճառողի կամ թվային բովանդակության կամ թվային ծառայության մատուցողի կողմից:

### *Հոդված 9*

#### **Երրորդ կողմի իրավունքները**

Եթե երրորդ կողմի իրավունքի, մասնավորապես՝ մտավոր սեփականության իրավունքների խախտման հետեւանքով առաջացած սահմանափակումը խոչընդոտում կամ սահմանափակում է ապրանքների օգտագործումը 6-րդ եւ 7-րդ հոդվածներին համապատասխան, ապա անդամ պետությունները պետք է ապահովեն սպառողի իրավունքը 13-րդ հոդվածով նախատեսված անհամապատասխանության դեպքում օգտվելու իրավական պաշտպանության միջոցներից, եթե ազգային օրենսդրությունն այդպիսի դեպքերում չի նախատեսում առուվաճառքի պայմանագրի անվավերություն կամ չեղարկում:

### *Հոդված 10*

#### **Վաճառողի պատասխանատվությունը**

1. Վաճառողը պատասխանատվություն է կրում սպառողի առջեւ ապրանքի առաքման պահին առկա ցանկացած անհամապատասխանության համար, որն ակնհայտ է դառնում այդ պահից սկսած երկու տարվա ընթացքում: Չհակասելով 7-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը՝ սույն պարբերությունը կիրառվում է նաեւ թվային տարրեր պարունակող ապրանքների նկատմամբ:

2. Թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսված է թվային բովանդակության կամ թվային ծառայության շարունակական մատուցում որոշակի ժամանակահատվածում, վաճառողը պատասխանատվություն է կրում նաեւ թվային բովանդակության կամ թվային ծառայության ցանկացած անհամապատասխանության համար, որը տեղի է ունենում կամ ակնհայտ է դառնում թվային տարրեր պարունակող ապրանքների առաքման պահից երկու տարվա ընթացքում: Եթե պայմանագրով նախատեսվում է երկու տարուց ավելի ժամկետով շարունակական մատակարարում, ապա վաճառողը պատասխանատվություն է կրում թվային բովանդակության կամ թվային ծառայության ցանկացած անհամապատասխանության համար, որը տեղի է ունենում կամ ակնհայտ է դառնում այն ժամանակահատվածի ընթացքում, որն ըստ պայմանագրի նախատեսված է թվային բովանդակություն կամ թվային ծառայություն մատուցելու համար:
3. Անդամ պետությունները կարող են սահմանել ավելի երկար ժամկետներ, քան նշված է 1-ին եւ 2-րդ պարբերություններում:
4. Եթե ազգային օրենսդրության համաձայն 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների համար նույնպես սահմանված են վերջնաժամկետներ, ապա անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այդ վերջնաժամկետը սպառողին հնարավորություն տա կիրառել 13-րդ հոդվածով սահմանված միջոցներն այնպիսի անհամապատասխանության դեպքում, որի համար վաճառողը պատասխանատվություն է կրում սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն, եւ որն ակնհայտ է դառնում այդ պարբերության մեջ նշված ժամկետում:
5. Չնայած սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններին՝ անդամ պետությունները կարող են վերջնաժամկետ սահմանել միայն 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցների համար: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այդպիսի վերջնաժամկետները

սպառողին թույլ տան կիրառել 13-րդ հոդվածով սահմանված միջոցները ցանկացած անհամապատասխանության դեպքում, որի համար պատասխանատու է վաճառողը սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն, եւ որն ակնհայտ է դառնում այդ պարբերություններում նշված ժամկետում:

6. Օգտագործված ապրանքների դեպքում անդամ պետությունները կարող են նախատեսել վաճառողի եւ սպառողի միջեւ համաձայնության ձեռքբերում պայմանագրային պայմանների կամ համաձայնությունների մասով պարտավորությունների կատարման ավելի կարճ ժամկետի կամ վերջնաժամկետի վերաբերյալ, քան նշված է 1-ին, 2-րդ եւ 5-րդ պարբերություններում՝ պայմանով, որ ժամկետները չպետք է լինեն մեկ տարուց պակաս:

### *Հոդված 11*

#### **Ապացուցման պարտականությունը**

1. Ապրանքների առաքումից հետո մեկ տարվա ընթացքում ի հայտ եկած անհամապատասխանությունը համարվում է առաքման պահին գոյություն ունեցող, եթե հակառակը չի ապացուցվում, կամ եթե այդ ենթադրությունն անհամատեղելի չէ ապրանքների բնույթի կամ անհամապատասխանության բնույթի հետ: Սույն պարբերությունը կիրառվում է նաեւ թվային տարրեր պարունակող ապրանքների նկատմամբ:
2. 1-ին պարբերությամբ սահմանված մեկ տարվա ժամկետի փոխարեն անդամ պետությունները կարող են սահմանել ապրանքների առաքման պահից հաշվարկվող երկու տարվա ժամկետ:
3. Թվային տարրեր պարունակող ապրանքների դեպքում, երբ առուվաճառքի պայմանագրով նախատեսվում է թվային բովանդակության կամ թվային ծառայության շարունակական մատուցում որոշակի ժամանակահատվածի

ընթացքում, ապա վաճառողն է կրում ապացուցման պարտականությունն այն մասով, թե արդյոք 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշված ժամկետի ընթացքում ապահովվել է թվային բովանդակության կամ թվային ծառայության համապատասխանությունը:

### *Հոդված 12*

#### **Ծանուցման պարտականությունը**

Անդամ պետությունները կարող են սահմանել դրույթներ այն մասին, որ իր իրավունքներից օգտվելու նպատակով սպառողը պետք է վաճառողին տեղեկացնի անհամապատասխանության մասին այն հայտնաբերելուց հետո երկու ամսվա ընթացքում:

### *Հոդված 13*

#### **Անհամապատասխանության դեպքում իրավական պաշտպանության միջոցները**

1. Անհամապատասխանության դեպքում սպառողները պետք է սույն հոդվածով սահմանված պայմաններին համապատասխան իրավունք ունենան պահանջելու ապրանքի համապատասխանության ապահովում, գնի համարժեք իջեցում կամ պայմանագրի դադարեցում:
2. Ապրանքի համապատասխանությունն ապահովելու նպատակով սպառողը կարող է ընտրություն կատարել վերանորոգման եւ փոխարինման միջեւ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրված իրավական պաշտպանության միջոցի կիրառումն անհնարին է, կամ համեմատած մյուս իրավական պաշտպանության միջոցի հետ՝ այն վաճառողի համար կառաջացնի անհամաչափ ծախսեր՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, այդ թվում՝

- ա) այն արժեքը, որն ապրանքը կունենար, եթե գոյություն չունենար անհամապատասխանություն,
  - բ) անհամապատասխանության կարեւորության աստիճանը,
  - գ) այն հանգամանքը, թե արդյոք իրավական պաշտպանության այլընտրանքային միջոցը կարող էր կիրառվել առանց սպառողի համար էական անհարմարությունների:
3. Վաճառողը կարող է հրաժարվել ապահովելուց ապրանքի համապատասխանեցումը, եթե վերանորոգումն ու փոխարինումն անհնարին են, կամ վաճառողի համար կառաջարկեն անհամաչափ ծախսեր՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, ներառյալ՝ 2-րդ պարբերության «ա» եւ «բ» կետերում նշվածները:
4. Սպառողն իրավունք ունի կա՛մ գնի համարժեք նվազեցման՝ համաձայն 15-րդ հոդվածի, կա՛մ առուվաճառքի պայմանագրի դադարեցման՝ 16-րդ հոդվածի համաձայն՝ հետեւյալ դեպքերում.
- ա) վաճառողը չի ավարտել վերանորոգումը կամ փոխարինումը կամ կիրառելիության դեպքում չի ավարտել վերանորոգումը կամ փոխարինումը 14-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն, կամ վաճառողը հրաժարվել է ապրանքը համապատասխանեցնելուց սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն,
  - բ) ի հայտ է եկել անհամապատասխանություն՝ չնայած վաճառողի՝ ապրանքը համապատասխանեցնելու ջանքերի,
  - գ) անհամապատասխանությունն այնքան լուրջ բնույթ է կրում, որ արժեքի անհապաղ նվազեցումը կամ առուվաճառքի պայմանագրի դադարեցումն արդարացված է համարվում, կամ

- դ) վաճառողը հայտարարել է, կամ հանգամանքներից պարզ է դառնում, որ վաճառողը չի ապահովի ապրանքների համապատասխանեցումը ողջամիտ ժամկետում կամ առանց սպառողին զգալի անհարմարություններ պատճառելու:
5. Սպառողն իրավունք չունի դադարեցնելու պայմանագիրը, եթե անհամապատասխանությունն աննշան է: Անհամապատասխանության աննշան լինելու հետ կապված ապացուցման բեռը կրում է վաճառողը:
6. Սպառողն իրավունք ունի հետաձգելու չմարված գումարի կամ դրա մի մասի վճարումը, քանի դեռ վաճառողը չի կատարել սույն Հրահանգով իր համար սահմանված պարտականությունները: Անդամ պետությունները կարող են սահմանել սպառողի կողմից վճարումը հետաձգելու իրավունքից օգտվելու պայմաններն ու եղանակները:
7. Անդամ պետությունները կարող են կարգավորումներ նախատեսել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սպառողի մասնակցությունը անհամապատասխանությանը ազդում է սպառողի իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքի վրա եւ ինչ չափով:

#### Հոդված 14

#### **Ապրանքների վերանորոգումը կամ փոխարինումը**

1. Վերանորոգումը կամ փոխարինումը պետք է իրականացվի՝
- ա) անվճար,
- բ) այն պահից ողջամիտ ժամկետում, երբ վաճառողը սպառողի կողմից տեղեկացվել է անհամապատասխանության մասին, եւ
- գ) առանց սպառողին էական անհարմարություն պատճառելու՝ հաշվի առնելով ապրանքների բնույթը եւ նպատակային նշանակությունը, որի համար սպառողը պահանջել է ապրանքը:

2. Եթե անհամապատասխանությունը պետք է շտկվի ապրանքների վերանորոգման կամ փոխարինման միջոցով, ապա սպառողն ապրանքը հասանելի է դարձնում վաճառողին: Վաճառողը փոխարինված ապրանքը հետ է ընդունում իր հաշվին:
3. Եթե վերանորոգումը ենթադրում է ապրանքների հեռացում, որոնք տեղադրվել են իրենց բնույթին եւ նպատակային նշանակությանը համապատասխանող եղանակով նախքան անհամապատասխանության ակնհայտ դառնալը, կամ եթե այդպիսի ապրանքները ենթակա են փոխարինման, ապա ապրանքները վերանորոգելու կամ փոխարինելու պարտավորությունը պետք է ներառի չհամապատասխանող ապրանքների հեռացում եւ փոխարինող կամ վերանորոգված ապրանքների տեղադրում, կամ այդ հեռացման եւ տեղադրման ծախսերը կրելը:
4. Սպառողը պարտավոր չէ վճարել ապրանքների փոխարինմանը նախորդող ժամանակահատվածում դրանց բնականոն օգտագործման համար:

#### *Հոդված 15*

#### **Գնի նվազեցումը**

Գնի նվազեցումը պետք է համարժեք լինի սպառողի կողմից ստացված ապրանքների արժեքի նվազմանը՝ ի համեմատություն այն արժեքի հետ, որն ապրանքը կունենար համապատասխանության դեպքում:

#### *Հոդված 16*

#### **Առուվաճառքի պայմանագիրը դադարեցնելը**

1. Սպառողն առուվաճառքի պայմանագիրը դադարեցնելու իր իրավունքն իրականացնում է առուվաճառքի պայմանագիրը դադարեցնելու մասին իր որոշումն արտահայտող հայտարարություն անելու միջոցով:

2. Եթե անհամապատասխանությունը վերաբերում է առուվաճառքի պայմանագրով առաքված ապրանքներից միայն մի քանիսին, եւ առկա է առուվաճառքի պայմանագրի դադարեցման հիմք՝ համաձայն 13-րդ հոդվածի, ապա սպառողը կարող է դադարեցնել առուվաճառքի պայմանագիրը միայն այդ ապրանքների մասով, ինչպես նաեւ այլ ապրանքների մասով, որոնք սպառողը ձեռք է բերել չհամապատասխանող ապրանքների հետ միասին, եթե ողջամտորեն հնարավոր չէ սպառողից ակնկալել, որ նա կընդունի միայն համապատասխանող ապրանքները:

3. Եթե սպառողը դադարեցնում է առուվաճառքի պայմանագիրն ամբողջությամբ կամ 2-րդ պարբերության համաձայն՝ առուվաճառքի պայմանագրով առաքված միայն որոշ ապրանքների մասով, ապա՝

ա) սպառողը վաճառողին վերադարձնում է ապրանքը վաճառողի հաշվին, եւ

բ) վաճառողը ապրանքները ստանալուն պես կամ ապրանքները հետ ուղարկելու մասին սպառողի տրամադրած ապացույցն ստանալուց հետո պետք է սպառողին փոխհատուցի ապրանքների համար վճարված արժեքը:

Սույն պարբերության նպատակներով անդամ պետությունները կարող են սահմանել վերադարձի եւ փոխհատուցման եղանակները:

### *Հոդված 17*

#### **Առետրային երաշխիքները**

1. Առետրային երաշխիքը պարտադիր ուժ ունի երաշխավորի համար՝ պայմանագիրը կնքելու պահին կամ դրանից առաջ առետրային երաշխիքների վերաբերյալ հայտարարությամբ եւ համապատասխան գովազդով սահմանված պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով

սահմանված պայմաններով եւ չհակասելով Միության կամ ազգային օրենսդրության որեւէ կիրառելի դրույթի, եթե արտադրողը որոշակի ժամկետով սպառողին առաջարկում է որոշակի ապրանքների մշտակայունության վերաբերյալ առեւտրային երաշխիք, ապա արտադրողն ուղղակիորեն պատասխանատվություն է կրում սպառողի առջեւ՝ ապրանքների վերանորոգման կամ փոխարինման համար՝ մշտակայունության մասով առեւտրային երաշխիքի ողջ ժամանակահատվածի ընթացքում՝ 14-րդ հոդվածի համաձայն: Արտադրողը մշտակայունության վերաբերյալ առեւտրային երաշխիքով կարող է սպառողին առաջարկել առավել բարենպաստ պայմաններ:

Եթե առեւտրային երաշխիքների վերաբերյալ հայտարարությունում սահմանված պայմանները սպառողի համար պակաս բարենպաստ են, քան համապատասխան գովազդում նշված պայմանները, ապա առեւտրային երաշխիքը պարտադիր ուժ է ունենում առեւտրային երաշխիքի վերաբերյալ գովազդում սահմանված պայմաններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչեւ պայմանագիր կնքելը համապատասխան գովազդում ուղղում է արվել այն նույն ձեւով, ինչպես արվել է գովազդը, կամ էլ համադրելի ձեւով:

2. Առեւտրային երաշխիքների վերաբերյալ հայտարարությունը սպառողին է տրամադրվում հուսալի կրիչի վրա՝ ամենաուշը ապրանքների առաքման պահին: Առեւտրային երաշխիքների վերաբերյալ հայտարարությունը պետք է արվի պարզ, հասկանալի լեզվով: Այն պետք է ներառի հետեւյալը.

ա) հստակ հայտարարություն այն մասին, որ սպառողն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով վաճառողից անվճար փոխհատուցում ստանալու ապրանքների անհամապատասխանության դեպքում, եւ որ այդ իրավական պաշտպանության միջոցները ենթակա չեն փոփոխման առեւտրային երաշխիքով սահմանված միջոցների կիրառման արդյունքում,

- բ) երաշխավորի անունը եւ հասցեն,
  - գ) ընթացակարգը, որին պետք է հետեւի սպառողը՝ առետրային երաշխիքով սահմանված միջոցներից օգտվելու համար,
  - դ) ապրանքների անվանումը, որոնց նկատմամբ կիրառվում է առետրային երաշխիքը, եւ
  - ե) առետրային երաշխիքով սահմանված պայմանները:
3. 2-րդ պարբերության հետ չհամապատասխանելը չի ազդում երաշխավորի համար առետրային երաշխիքի պարտադիր լինելու վրա:
4. Անդամ պետությունները կարող են սահմանել կանոններ առետրային երաշխիքների այլ հայեցակետերի վերաբերյալ, որոնք չեն կարգավորվում սույն հոդվածով, ներառյալ՝ այն լեզվի կամ լեզուների մասով, որոնցով առետրային երաշխիքների վերաբերյալ հայտարարությունը հասանելի է լինելու սպառողին:

### Հոդված 18

#### **Փոխհատուցման իրավունքը**

Եթե վաճառողը պատասխանատվություն է կրում սպառողի առջեւ գործողության կամ անգործության հետեւանքով առաջացած անհամապատասխանության համար, ներառյալ՝ 7-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն գործարքների շղթայի նախորդ օղակներում գտնվող անձի կողմից թվային տարրեր պարունակող ապրանքների թարմացումները չապահովելը, ապա վաճառողն իրավասու է հետամուտ լինել գործարքների շղթայում պատասխանատու անձի կամ անձանց դեմ միջոցներ կիրառելուն: Այն անձը, որի նկատմամբ վաճառողը կարող է հետամուտ լինել իրավական պաշտպանության միջոցներ կիրառելուն, ինչպես նաեւ այդ միջոցների կիրառման հետ կապված համապատասխան գործողություններն ու իրականացման պայմանները սահմանվում են ազգային օրենսդրությամբ:

### Հոդված 19

#### Կիրարկումը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն պատշաճ եւ արդյունավետ միջոցների առկայությունը՝ սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:
2. Առաջին պարբերությունում նշված միջոցները պետք է պարունակեն դրույթներ, որոնց համապատասխան ազգային օրենսդրությամբ սահմանված ներքոնշյալ մարմիններից մեկը կամ մի քանիսը կարող են ազգային օրենսդրության համաձայն միջոցներ ձեռնարկել դատարաններում կամ իրավասու վարչական մարմիններում՝ ապահովելու համար սույն Հրահանգին համապատասխան օրենսդրության համապատասխանեցմանն ուղղված ազգային օրենսդրության դրույթների կիրառումը՝
  - ա) պետական մարմինները կամ նրանց ներկայացուցիչները,
  - բ) սպառողների իրավունքների պաշտպանության հարցում օրինական շահ հետապնդող կազմակերպությունները,
  - գ) մասնագիտացված կազմակերպությունները, որոնք իրենց մասնագիտական հարցերում օրինական շահ են հետապնդում:

### Հոդված 20

#### Սպառողներին տրամադրվող տեղեկությունները

Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար սույն Հրահանգով սահմանված՝ սպառողների իրավունքների եւ այդ իրավունքների իրականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը սպառողներին:

## Հոդված 21

### Պարտադիր բնույթը

1. Եթե սույն Հրահանգով այլ բան սահմանված չէ, պայմանագրի շրջանակներում ի վնաս սպառողի ձեռք բերված որել է համաձայնություն, որի արդյունքում չեղարկվում է սույն Հրահանգին համապատասխան ազգային օրենսդրության համապատասխանեցմանն ուղղված միջոցների կիրառումը, շեղում է դրանցից կամ փոփոխում է դրանց ազդեցությունը նախքան սպառողի կողմից վաճառողի ուշադրությունն ապրանքի անհամապատասխանությանը հրավիրելը, սպառողի համար իրավաբանական ուժ չի կարող ունենալ:
2. Սույն Հրահանգը չի խոչընդոտում վաճառողի կողմից պայմանագրի շրջանակներում սպառողների հետ այնպիսի համաձայնություններ ձեռք բերելը, որոնք գերազանցում են սույն Հրահանգով սահմանված պաշտպանության միջոցները:

## Հոդված 22

### 2017/2394 (ԵՄ) կանոնակարգում եւ 2009/22/ԵՀ

#### հրահանգում փոփոխությունները

- 1) 2017/2394 (ԵՄ) կանոնակարգի հավելվածում 3-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.  
  
«3. «Ապրանքների առուվաճառքի պայմանագրերի որոշ հայեցակետերի, 2017/2394 (ԵՄ) կանոնակարգը եւ 2009/22/ԵՀ հրահանգը փոփոխելու եւ 1999/44/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին (ՊՏ L 136, 22.5.2019թ., էջ 28)» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2019 թվականի մայիսի 20-ի 2019/771 (ԵՄ) հրահանգ».

- 2) 2009/22/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածի 7-րդ պարբերությունը շարադրել հետեյալ բովանդակությամբ.

«7. «Ապրանքների առուվաճառքի պայմանագրերի որոշ հայեցակետերի, 2017/2394 (ԵՄ) կանոնակարգը եւ 2009/22/ԵՀ հրահանգը փոփոխելու եւ 1999/44/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելու մասին (ՊՏ L 136, 22.5.2019թ., էջ 28)» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2019 թվականի մայիսի 20-ի 2019/771 (ԵՄ) հրահանգ» (ՊՏ L 136, 22.5.2019թ., էջ 28)»:

### *Հոդված 23*

#### **1999/44/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելը**

1999/44/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2022 թվականի հունվարի 1-ից:

Ուժը կորցրած հրահանգին արվող հղումները դիտարկվում են որպես սույն Հրահանգին արվող հղումներ եւ պետք է ընթերցվեն հավելվածով սահմանված համեմատական աղյուսակին համապատասխան:

### *Հոդված 24*

#### **Օրենսդրության համապատասխանեցումը**

1. Մինչեւ 2021 թվականի հուլիսի 1-ն անդամ պետությունները պետք է ընդունեն եւ հրապարակեն սույն Հրահանգին համապատասխանություն ապահովելու համար անհրաժեշտ փոփոխությունները: Նրանք այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնեն Հանձնաժողովին:

Նրանք այդ փոփոխությունները պետք է կիրառեն 2022 թվականի հունվարի 1-ից:

Անդամ պետությունների կողմից այդ փոփոխություններն ընդունելուց հետո, պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն այդպիսի հղումով: Այդպիսի հղում անելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային օրենսդրության մեջ փոփոխությունների տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

2. Սույն Հրահանգի դրույթները չեն կիրառվում 2022 թվականի հունվարի 1-ից առաջ կնքված պայմանագրերի նկատմամբ:

### *Հոդված 25*

#### **Վերանայումը**

Հանձնաժողովը ոչ ուշ, քան 2024 թվականի հունիսի 12-ը, պետք է վերանայի սույն Հրահանգի կիրառումը, ներառյալ՝ իրավական պաշտպանության միջոցների եւ ապացուցման բեռի մասին դրույթների, ինչպես նաեւ օգտագործված ապրանքների, հրապարակային աճուրդով վաճառվող ապրանքների, արտադրողի կողմից ապրանքի մշտակայունության վերաբերյալ առետրային երաշխիքի մասով, եւ զեկույց ներկայացնի Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ եւ Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտե: Զեկույցում մասնավորապես պետք է գնահատվի, թե արդյոք սույն Հրահանգի եւ 2019/770 (ԵՄ) հրահանգի կիրարկումն ապահովում է ներքին շուկայի պատշաճ գործունեության հետեւողական եւ համահունչ իրավական շրջանակ՝ կապված թվային բովանդակության, թվային ծառայությունների եւ թվային տարրեր պարունակող ապրանքների մատակարարման հետ՝ Միության կողմից ընդունված քաղաքականությունների հիմքում դրված սկզբունքներին համահունչ: Անհրաժեշտության դեպքում հաշվետվությանը կից կներկայացվեն օրենսդրական առաջարկություններ:

*Հոդված 26***Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Այնուամենայնիվ, 22-րդ հոդվածը պետք է կիրառվի 2022 թվականի հունվարի 1-ից:

*Հոդված 27***Անձանց շրջանակը**

Սույն Հրահանգն ուղղված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2019 թվականի մայիսի 20-ին:

*Եվրոպական պառլամենտի կողմից՝*

*Նախագահ*

Ա. Տայանի

*Խորհրդի կողմից՝*

*Նախագահ*

Ջ. Սիամբա

---

## ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

1999/44/ԵՀ հրահանգ	Սույն Հրահանգ
1-ին հոդվածի 1-ին պարբերություն	1-ին հոդված
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետ	2-րդ հոդված 2-րդ պարբերություն
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «բ» կետի 1-ին պարբերությ	3-րդ հոդվածի 4-րդ պարբերության «բ» կետ
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «բ» կետի երկրորդ և երրորդ պարբերություններ	2-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետ
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետ	2-րդ հոդվածի 3-րդ կետ
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «դ» կետ	2-րդ հոդվածի 4-րդ կետ
1-ին հոդվածի 2-րդ պարբերության «ե» կետ	2-րդ հոդվածի 12-րդ կետ
1-ին հոդվածի 3-րդ պարբերություն	2-րդ հոդվածի 15-րդ կետ և 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «ա» կետ
1-ին հոդվածի 4-րդ պարբերություն	3-րդ հոդվածի 2-րդ պարբերություն
2-րդ հոդվածի 1-ին պարբերություն	5-րդ հոդված
2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «ա» կետ	6-րդ հոդվածի «ա» կետ և 7-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» կետ
2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «բ» կետ	6-րդ հոդվածի «բ» կետ
2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետ	7-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» կետ
2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «դ» կետ	7-րդ հոդվածի 1-ին պարբերության «դ» կետ
2-րդ հոդվածի 3-րդ պարբերություն	7-րդ հոդվածի 5-րդ պարբերություն
2-րդ հոդվածի 4-րդ պարբերություն	7-րդ հոդվածի 2-րդ պարբերություն
2-րդ հոդվածի 5-րդ պարբերություն	8-րդ հոդված
3-րդ հոդվածի 1-ին պարբերություն	10-րդ հոդվածի 1-ին պարբերություն

1999/44/ԵՀ հրահանգ	Սույն Հրահանգ
3-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	13-րդ հոդվածի 1-ին պարբերություն
3-րդ հոդվածի 3-րդ պարբերության առաջին ենթապարբերություն	13-րդ հոդվածի 2-րդ պարբերություն եւ 14-րդ հոդվածի 1-ին պարբերության «ա» կետ
3-րդ հոդվածի 3-րդ պարբերության երկրորդ ենթապարբերություն	13-րդ հոդվածի 2-րդ պարբերություն
3-րդ հոդվածի 3-րդ պարբերության 3-րդ ենթապարբերություն	14-րդ հոդվածի 1-ին պարբերության «բ» եւ «գ» կետեր
3-րդ հոդվածի 4-րդ պարբերություն	2-րդ հոդվածի 14-րդ կետ
3-րդ հոդվածի 5-րդ պարբերություն	13-րդ հոդվածի 4-րդ պարբերություն
3-րդ հոդվածի 6-րդ պարբերություն	13-րդ հոդվածի 5-րդ պարբերություն
4-րդ հոդված	18-րդ հոդված
5-րդ հոդվածի 1-ին պարբերություն	10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ պարբերություններ
5-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	12-րդ հոդված
5-րդ հոդվածի 3-րդ պարբերություն	11-րդ հոդված
6-րդ հոդվածի 1-ին պարբերություն	17-րդ հոդվածի 1-ին պարբերություն
6-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	17-րդ հոդվածի 2-րդ պարբերություն
6-րդ հոդվածի 3-րդ պարբերություն	17-րդ հոդվածի 2-րդ պարբերություն
6-րդ հոդվածի 4-րդ պարբերություն	17-րդ հոդվածի 4-րդ պարբերություն
6-րդ հոդվածի 5-րդ պարբերություն	17-րդ հոդվածի 3-րդ պարբերություն
7-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին ենթապարբերություն	21-րդ հոդվածի 1-ին պարբերություն
7-րդ հոդվածի 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերություն	10-րդ հոդվածի 6-րդ պարբերություն
7-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	-

1999/44/ԵՀ հրահանգ	Սույն Հրահանգ
8-րդ հոդվածի 1-ին պարբերություն	3-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ պարբերություններ
8-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	4-րդ հոդված
9-րդ հոդված	19-րդ եւ 20-րդ հոդվածներ
10-րդ հոդված	22-րդ հոդված
11-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին ենթապարբերություն	24-րդ հոդվածի 1-ին պարբերության առաջին ենթապարբերություն
11-րդ հոդվածի 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերություն	24-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ ենթապարբերություն
11-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	24-րդ հոդվածի 1-ին պարբերության 4-րդ ենթապարբերություն
12-րդ հոդված	25-րդ հոդված
13-րդ հոդված	26-րդ հոդված
14-րդ հոդված	27-րդ հոդված